

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — Թ Ի Ի Թ Է Լ Ժ

ՊԵԿՏԵՄԲԵՐ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ր Ն

ԷԶ

1 . Բրիստոնկոնքեան Բարերար Ազդեցութիւնը Քաղաքակրթութեան գործոյն մեջ .	257
2 . Նա՛ւադուռն Եկեղեցական Պատկերութեան . — Ընդհանուր պատկերական հայեացք . Հերանոսք . Հրեայք .	264 264 267
3 . Սուրբ Խաչի նշանակութիւնը .	270
4 . Ճշմարիտ բարեկամութիւն .	272
5 . Կրօնական Դաստաւանդութիւն . — Սրբազան Առաքեալք Բրիստոսի .	277
6 . Աւերիկայի Հայոց Երիտասարդախան Քիստոնեական Ընկերութիւն .	279
7 . Թղթակցութիւն . — Նախակ Կ. Պօլսէն .	280
8 . Բարոյական Ոճանաւորք .	282
9 . Յաւելոյ ած . — Թուղթ Հովութեան .	289-324

Հանդիսիս Արգոյ բաժանորդաց կրճանուցանեմք որ  
կրօնաքերքիս 1900ի բոլոր քիւերն ի մի կազմելու համար  
գեղեցիկ ոսկեգօծ երեսով կազմեր կրպատաստուին՝ փոք-  
րիկ գնով բաժանորդաց սալու համար : Մանրամասնութիւնք  
եւ գինն Յունուարի քուոյն մեջ պիտի հրատարակուին :

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

# Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

Ա Մ Ս Ա Փ Ե Ր Փ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե Լ Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Փ Ն Տ Ե Ա Փ Ն Մ Կ Ր Տ Ձ Ի

Մ ր ք ա զ ն ա գ ոյ յ ն Կ ա ր ք ու ղ ի կ ոս ի Ա մ ե ն ա յ ն Հ ա յ ոց

Թ Ի Ի 9 Ե Լ 10 Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 1900

Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ո Ւ Փ Ե Ա Ն Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ա Ջ Դ Ե Ց Ո Ւ Փ Ի Ի Ն Ը  
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ր Փ Ո Ւ Փ Ե Ա Ն Գ Ո Ր Շ Ո Յ Ն Մ Է Ջ :

Գ Ր Ե Ա Ց Գ Ե Ր Տ Ե Ր Գ Ե Ո Ր Գ Ե Մ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ի Յ Ի Ի Ճ Ե Ա Ն .

Ը ն դ հ ա ն ու ր Հ ո գ ե ու ր Հ ո վ ի ր Ե Լ Ա ո ա չ ն ուր ց Ե ր ո ս ի ոյ .

Ց ա ւ ա լ ի Ե ր և Ե ոյ թ մ ' է ո Ր մ Ե ր թ ը ն դ մ Ե ր թ ի մ ա ս տ ա կ թ Ե ր ու մ ն Ե ր , ն Ե ր չ ն չ ու Ե լ ո յ մ ա ն ա ւ ա ն դ ի ր Ե ն ց գ ա ն ու ա մ մ ի ջ ա լ ա յ ր Ե ր ու յ ո Ւ ի կ ո ղ մ Ե ր է ն ' զ ր ա խ օ ս ու Ե թ Ե ա մ ք կ ա մ գ ր չ ի ա փ Ե ղ ց փ Ե ղ թ ա փ թ փ ու ք ն Ե ր ո յ ա ո ի թ չ Ե ն փ ա խ ց ն Ե ր ո Ր Ե Լ է ձ Ե Ե ի տ ա կ ա ն կ Ր օ ն ու Ե թ Ե ա ն թ ոյ ն մ ա տ ա կ ա ր ք Ե ր լ ու ի ր Ե ն ց ու ն կ ն դ ր ա ց կ ա մ ը ն թ Ե ր ց ո ղ ա ց , հ ո չ ա կ Ե լ ո յ զ կ Ր օ ն թ ջ ն ա մ ի յ ա ո ա ջ ա դ ի մ ու Ե թ Ե ա ն Ե Լ ի Ե ր ա յ ն պ ա տ ճ ա ո մ Ե ր յ Ե տ ա դ ի մ ու Ե թ Ե ա ն :

Ե թ է հ ար ց ն Ե ս ա յ ն ա ի ս Ե ա ց թ է ո Ր ո ն ք Ե ն ի ր Ե ն ց կ ա ր դ ա ց ա մ հ Ե ղ ի ն ա կ ն Ե ր ն ' ս կ ս ի ն թ ու Ե լ ք Ե ղ կ ա ր գ մ ը ն ի Ե թ ա պ ա շ տ ն Ե ր ու ա ն ու Ե ն ն Ե ր ' ո Ր ոց ա ր ղ է ն հ ա շ ա ա չ օ ք չ ն ա յ ի ր ք ա ղ ա ք ա կ ի ր թ մ ար ղ կ ու Ե թ Ե ն ն : Հ ար ց ու Ե ր ու Ե ի ջ ա ս տ ու ա ծ ա ր ա ն հ Ե ղ ի ն ա կ ա ց կ ա մ Ե ր Ե Ե լ ի փ ի լ ի ս տ ի ա յ ի ց ա ն ու ն ն Ե ր ' չ գ ի տ ն , Ե Լ Ե թ է ղ ու ու ղ Ե ս յ ի ջ Ե ն ն Ե լ ' պ ա տ ա ի ա ն դ

կըլինի երգիծանք: Մէկ խօսքով առակաւոր աքաղաղին նման ախմարաբար մերժելով մարգարիտը՝ նախամեծար համարին աղբիւսներու մէջ թափառել:

Մեք բնաւ դիտաւորութիւն չունիմք այնպիսի արաւրածոց հետ վիճել կամ զանոնք համոզելու փորձ փորձել. այս մասին Տիրոջ պատուէրն առ պաշտօնեայս Աւետարանի՝ բացայայտ է (Մատ. է 6). յաւակնութիւն ալ չունիմք յայտնեալ ճշմարիտ վարդապետութիւնը պաշտպանելու հընել, քանզի ինչ որ արդէն իսկ բացարձակապէս աստուածային է՝ մարդկային պաշտպանութեան կարօտ չենք կարող համարել, քաւ՝ լիցի: Մի եւ նոյն ժամանակ սակայն մատնանիչ կրնեմք սա ճշմարտութիւնն եւս թէ՛ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ մէջ գայթակղութեանց գալն հարկ դատուած է ի նոյն ինքն Քրիստոսէ, թէ եւ սոսկալի է վա՛յն մարդոյն այնմիկ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւն (Մատ. ԺԸ 7). ցորենւոյ հետ պիտի գտնուի եւ որոմն՝ մինչեւ ցժամանակ հնձոց (Մատթ. ԺԳ 24-30): Այսու Եկեղեցին միշտ պիտի մնայ իւր փառաց մէջ, պիտի փայլի միշտ նորա ճշմարտութիւնն եւ պիտի մնայ հաստատուն, յաւէտ՝ մինչեւ ի կատարած աշխարհի:

Ներկայ յօղուածոյս մէջ մեր նպատակն եղած է հետեւողութեամբ նշանաւոր հեղինակաց պարզ ոճով եւ ապացոյցներով բարոյասէր ընթերցողաց ցոյց տալ թէ քրիստոնէական կրօնն քաղաքակրթութեան թշնամի եւ յետադիմութեան պատճառ չլինելէ զատ, ընդ հակառակն, զլիաւոր պատճառն եղած է մարդկային յառաջադիմութեան: Այո՛, արդի երեւելի պա՛մինչեւրէն բազումք հաստատած են թէ՛ այժմու յաջող քաղաքակրթութիւնն, բառին վսեմ նշանակութեամբ պտուղ է քրիստոնէական ազդեցութեան: Եւ արգարեւ, եթէ արդի քաղաքակրթութեան փառքն ու պարծանքն համարող տարրներէն մի քանին գոնէ լրջօրէն ուսումնասիրենք՝ պիտի համոզուինք թէ անոնց համար մեծապէս պարտական ենք Աւետարանին: Սկսինք յիշեալ տարրերու ստորնագոյնէն՝ որ է հարստութիւնն:

Հարստութիւնն բարի է ըստ ինքեան եւ խիստ կարեւոր է ազգի մը բարգաւաճման համնելու համար:

Պէ՞տք չէ շփոթել աստուածապարգեւ հարստութիւնն անգուլթ եւ անողորմ հարուստներու հետ: Աւետարանի

մէջ կըտեսնենք աշխարհի մեծատուն ոմն՝ որ այս կենաց մէջ ամենայն բարեօք յղիացեալ՝ հանդերձելոյն մէջ մի կաթիլ ջրոյ կարօտը կըքաշէ (Ղուկ . ԺՁ 24) . կըտեսնենք ուրիշ հարուստ իշխան մը՝ որ յաւիտենական կեանքը ժառանգելու տենչանօք կըմօտենայ առ Յիսուս , որմէ երբ կըլսէ թէ այդ երանութեան հասնելու համար պարտի նիւթական գոհողութիւն ընել՝ տրտում ախուր ետ կըգառնայ, ինչու որ նորա սիրուն կապեալ էր իւր ստացուածոց հետ (Մատթ . ԺԹ . 16-24) : Երեսնենք սակայն ուրիշ ամենահարուստ անձնաւորութիւն մ'ալ որ Սուրբ Գրոց մէջ յիշուած մեծ անուանց մէջ ամենամեծ տեղն գրաւած՝ եւ որ յաւիտենական երանութեան մէջ բազմած է իւր գիրկն ունենալով աշխարհի աղքատաց ամենաթշուառն (Ղուկ . ԺՁ 23) : Յայտնի կ'երեւի ուրեմն թէ մեծատանց Աստուծոյ արքայութիւն մանկու գօռարութեան պատճառն ոչ թէ իրենց հարստութեան մէջ փնտոտելու է՝ այլ իրենց անհոտական վատ նկարագրին մէջ . քանզի մարդկային հարստութեան բուն աղբիւրն Աստուած է . ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի նմանէ եւ եթ իջանեն առ մեզ . ինչպէ՞ս ուրեմն Աստուած արդար եղած կըլինի՝ եթէ ինքն տալով հարստութիւն՝ գատապարտէ զհարուստն : Ընդհակառակն Տէրոջ կամքն այն է՝ որ ամեն մարդ իւր հարստութիւնը պէտք եղածին պէս գործածելով առաւել շահի եւ օգտակար հանդիսանայ . Տէրն կ'անուանէ զայնպիսին ազնիւ, բարի եւ հաւատարիմ ծառայ , եւ կըհրաւիրէ զնա յուրախութիւն իւր . մինչ պատիժ կ'սպառնայ քանքարաթաքոյց հարուստին՝ չար եւ վատ անուն տալով նմա (Մատթ . ԻԵ 14-30) :

Ապա ուրեմն Աւետարանն հարստութեան հակառակ չլինելէ զատ ընդհակառակն գովելով կը քաջալերէ իրենց գործօնէութեամբ հարստացեալ անձինքն՝ որոց պատուական հարստութեան բարեբար արդիւնքներն կըվայելէ մարդկութիւնը :

Մարդկային քաղաքակրթութեան նպաստած են դպրոցներ , մատենադարաններ , համալսարաններ , գիտական ընկերութիւնք , հեղինակութիւնք եւ այլն : Յայտնի է թէ առանց հարստութեան չեն կարող գոյութիւն ունենալ սոքա եւ ոչ ալ գիտութեան եւ արուեստի հմուտ մարդիկ առանց հարստութեան կարող են իրենց կեանքն ու ժամանակը նուիրել ազգի ընդհանուր լուսաւորու-

թեան: Այո՛, հարստութիւնն այնպիսի՝ օգտակար նպատակներու կը ծառայէ՝ որ առանց անոր անհար է բարձր քաղաքակրթութեան հասնիլ: Ժամանակակից քաղաքակրթութիւնն իւր նիւթական ճոխութեան մասին անտարակոյս մեծապէս պարտական է ժուժկալութեան եւ աշխատութեան սկզբունքներուն. իսկ այդ սկզբունքներն քրիստոնէութեան սիրած եւ քարոզած սկզբունքներն են: Արդարեւ քրիստոնէական պատմութիւնը ցոյց կը տայ թէ՛ այն ազգերն ու անհատներ, որոնք ուղիղ ըմբռնելով Աւետարանի ոգին՝ իրենց վարքն ու բարքն անոր համեմատ կը վարեն՝ կը դառնան աշխատասէր եւ միանգամայն ժուժկալ: Այս հանգամանքը մեծապէս կօզնէ անոնց նիւթականի թէ՛ ստացմանը եւ թէ՛ պահպանութեան, որով բնականաբար կը յառաջանայ նոցա ճոխութիւնը: Իրաւ է թէ հեթանոս ազգերն եւս եղած են հարստութեամբ ճոխացեալ, բայց նոքա անկարող են երկար պահել իրենց հարստութիւնը, ինչպէս եւ այժմ անկարելի է որ շոտլ, զեղիս եւ ապականեալ մարդոց ձեռաց մէջ յարատեւ լինի հարստութիւնը: Այն ազգաց անհատներն շուտով անձնատուր եղան ամեն տեսակ անբարոյականութեան եւ վատնեցին իրենց հարստութիւնը զեղխութեամբ եւ ընկղմեցան ամօթալի ապականութեանց մէջ. որպէս եւ այժմ նոյնը կընեն եւ կըլինին նոքա՝ որոց համար Աւետարանի սրբութիւնը կորուսած է իւր նշանակութիւնը:

Յայտնի է որ առեւտրական մեծամեծ ձեռնարկութիւններ, որով միայն կարելի է որ եւ է ազգի կամ երկրի բնական հարստութեան աղբիւրներն մշակել եւ արդիւնաւորիլ, ընկերական միաբանութիւն կը պահանջեն ամեն տեղ եւ ամեն ժամանակ: Բայց մարդիկ պէտք է միմեանց վրայ վստահութիւն ունենան, որպէս զի կարող լինին ընկերութիւններ կազմել եւ միմեանց օգնել մեծամեծ ձեռնարկներու մէջ: Ո՛վ պիտի տայ այդ վստահութիւնը: Անշուշտ այն կրթութիւնը՝ որոյ խորիխն է Աւետարանը: Աւետարանն ի սրտէ ընդունողներուն վարքն ու բարքը դէպ ի լաւն կրթութեամբ՝ մարդիկ կը դառնան արդարասէր եւ ուղիղ. իսկ ուղղութիւնն ու արդարասիրութիւնը կուտան փոխադարձ վստահութիւն անհատներու, որոնք ընկերութիւն կազմելով կսկսին եւ յաջողութեամբ կը շարունակեն մեծամեծ ձեռնարկներ: Ուր չկայ այդ վստահութիւնը՝ անդ կարելի չէ լինել

համերաչխ ընկերակցութիւն եւս :

Ճշմարիտ քաղաքակրթութիւնը կը պարծի ո՛չ այնչափ իւր բուն հարստութեամբ, որչափ այն հարստութիւնն ազնիւ եւ գովելի կերպով ի գործ դնելու խոհեմութեամբ :

Քաղաքակրթութիւնը, եթէ ճշմարիտ քաղաքակրթութիւն է, կը պարծի մանաւանդ իւր անթիւ բարենպատակ եւ մարդասիրական հաստատութիւններով՝ որք հիմնուած են Աւետարանի յորդորմամբ ամեն տեսակ թշուառներու համար, որպէս են հիւանդանոցներ, որբանոցներ, խուլուհամրերու դպրոցներ, եւ այլն :

Արդի քաղաքակրթութեան հարստութիւնը նախատինք պիտի լինէր մանաւանդ քան թէ փառք՝ եթէ մերժէր այս երկնային վարդապետութիւնը թէ՛ արեւի երանելի ետալը՝ քան առնուրդ, եւ վատնէր իւր հարստութիւնը զեղխութեան մէջ եւ կամ թէ ազանութեան պատճառներով ծածկէր զայն : Երբեմն հեթանոս աղգերն եւս բարենպատակ հաստատութիւններ ունեցան, այլ իրենց վարուց ապականութեան պատճառաւ վատնեցին ամեն ինչ զեղխութեան մէջ, սպառեցին իրենց հարստութիւնը եւ զօրութիւնը, խանդարեցին առաքինութեան սկզբբունքները եւ այնպէս կործանեցած. բայց այսօր քրիստոնէութեան բարոյական զօրութիւնը այդ վտանգներէն կը պահպանէ ազգերը եւ ամեն քրիստոնեայ երկիրներու կամ ազգաց հարստութիւնը կը գործածուի բարեսիրական հաստատութեանց եւ մարդավայել ու աստուածահաճոյ գործոց համար եւ ո՛չ այնպիսի զեղծմանց համար՝ որովք հին դարուց մէջ ազգեր ոչնչացան : Նոյն իսկ փոքրիկ քրիստոնեայ հասարակութեանց մէջ անգամ գտնուած հարուստ անհատներ մեծ փոյթ ունին իւրեանց հարստութեանէն մեծամեծ բաժիններ հանելու բարենպատակ հաստատութեանց համար, ի կենդանութեան նպաստներ կամ կտակներ ընելով :

Արդի քաղաքակրթութեան փառքն ու պարծանքը համարուող մի ուրիշ տարրն է դաստիարակութիւնը : Պատմութիւնը մեզ համոզած է թէ՛ երբ մարդիկ սրտանց ընդունեցին Աւետարանը եւ ուղիւ հասկցան, այն ժամանակ միայն ազգաց լուսաւորութեան գործն ընթացաւ դէպ յառաջ :

Եւ յիրաւի, Աւետարանն այդ արդիւնքն առաջ բերաւ

այլ եւ այլ կերպով, (1) Մարդու սիրտն ազատելով մոլութիւններէ: Ճշմարիտ լուսաւորութեան եւ մտաւորական զարգացման ամենամեծ թշնամիք են մոլութիւնք: Աւետարանն ազատած է զմարդիկ տեսակ տեսակ մոլութիւններէ՝ որոնք կըմթացնեն մարդու իմացողութիւնը, կըխանդարեն երեւակայութիւնը եւ կըտկարացնեն կարողութիւնները: Իրողութիւն է որ հին դարուց յոյնք եւ հռովմայեցիք իրենց կրից բռնութենէն ընկճեալ՝ ապականեցան, իրենց իմացական կարողութիւնք տկարացան եւ ուսմանց ու գիտութեանց մէջ առաջնութիւննին կորուսին: Արդ, եթէ ճշմարիտ լուսաւորութեան թշնամիքն են մոլութիւնք, անշուշտ նոյն լուսաւորութեան քարեկամն ու առաջնորդն է Քրիստոսի Ս. Աւետարանը:

(2). Աւետարանն ընծայած է ամեն մարդու այնպիսի մեծամեծ խնդիրներ՝ որ կարող են արդեամբ զբաղեցնել մարդոց մտաւոր կարողութիւնները: Կըզարձնէ մեր միտքը դէպ ի սկիզբն ժամանակի՝ երբ Աստուած զբաւերկրիս հիմերը: Կըքարոզէ մեզ մարդկային էութեան, գոյութեան եւ փրկագործութեան վերջնական պատկերը: Կըտանի մեր միտք դէպ ի այն ժամը՝ երբ այլ եւս ժամանակ չպիտի լինի, այլ միայն յաւիտենականութիւն: Կըտանի զմեզ ժամանակաւորէն դէպ ի յաւիտենականը, սահմանաւոր իրերու անկատարութենէ՝ դէպ ի անսահման էակի կատարելութիւնը. արարածներէն դէպ ի Արարիչն տիեզերաց: Այս մեծամեծ խնդիրներու քննութիւններով Աւետարանը կըզարգացնէ մեր միտքը՝ իւր բոլոր կարողութիւններով տալով մեզ հոգւոյ անմահութեան հաւատքն ու յոյսը, տպաւորելով մեր հոգւոյ մէջ Սեր առ Աստուած եւ առ ընկերս: Մեր երջանկութիւնը կըզնէ Աստուծոյ ձեռաց մէջ, կըյուսադրէ թէ պիտի ժառանգենք կատարեալ երջանկութիւնը՝ եթէ հաւատանք Աստուծոյ եւ նմա հաճելի վարք ու քարք եւ գործեր ունենանք, եւ մեր ընկերներն սիրել եւ անոնց օգնելն կըհամարի այն եղանակը՝ որով ստանալու ենք յաւիտենական երջանիկ կեանքը:

Արդ, այն ո՞ր դաստիարակութիւնն է որ կարող է մարդս երջանկացնել, երբ Աւետարանի այս պահանջները մերժէ եւ կամ լիովին չարմատացնէ զաստիարակողի հոգւոյ եւ սրտի մէջ. միթէ առանց աստուածասիրութեան եւ ընկերսիրութեան կարո՞ղ է մարդս պիտանի լինել

անձին , ազգին եւ մարդկութեան . միթէ կարելի՞ է կրթութիւն համարել այն դաստիարակութիւնը՝ որ զուրկ է կամ թերի Աւետարանի սուրբ սկզբունքներէն եւ ամենամաքուր բարոյականէն :

Յիսուս քարոզեց որ բոլոր մարդիկ բարոյապէս զարգանալով պարտին լինել կատարեալ իւրեանց երկնաւոր Հօր պէս (Մատ. է 48) : Ի՞նչ եղբակացութիւն ըրաւ մարդկութիւնն այս վարդապետութիւնէն . — Նախ՝ այս , թէ՛ ամենուս Հայրը մի է , ուրեմն՝ ամենքս պիտի ընդունինք զմիմեանս իբրեւ հոգեւոր եղբայր եւ քոյր . փոխադարձաբար սիրելով զմիմեանս . երկրորդ , ամենքս բարոյական կատարելութեամբ միայն հաւասար պիտի լինինք մեր Երկնաւոր Հօր առջեւ , ուրեմն իբրեւ եղբայրներ առանց նախանձու պետք է ձեռնտու եւ օգնող լինինք միմեանց՝ բարոյական կատարելութիւն ձեռք բերելու : Այդ կատարելութեան հասնելու միակ միջոցը դաստիարակութիւնն է : Քաղաքակիրթ աշխարհն առաջնորդուելով այս սկզբունքէն՝ ամեն զոհողութիւն յանձն առաւ եւ տարրական ուսումնս պատաւորիչ ըրաւ հանրութեան , որպէս զի ամենուս սրտերն ալ աշխուանան Աւետարանի բարոյականով :

Եթէ հին քաղաքակրթութիւնը մի քանի անձանց մտաւորական գերազանցութեան համար կը պարծի՛ արդի քաղաքակրթութիւնն կը պարծի իւր դաստիարակութեան ընդհանուր ծաւալման համար , ուրախ է ո՛չ միայն իւր բարձրագոյն վարժարանաց եւ համալսարանաց այլ մանաւանդ հասարակ կամ տարրական կրթարանաց համար՝ որք այժմ ամեն գիւղերու մէջ կան : Յիսուս ինքն հասարակ ժողովրդեան ուսուցիչն եղաւ , նոյնը պատուիրեց իւր աշակերտաց , որք ո՛չ միայն աշխուականներու , արտօնեալներու կամ հարուստներու քարոզեցին մտքի լուսաւորութիւն եւ սրտի մաքրութիւն՝ այլ առաւել եւս հասարակ ժողովրդեան , որ եւ կարօտ էր օգնութեան : Յիսուսի եւ իւր աշակերտաց օրինակին կրհետելի այսօր քաղաքակիրթ մարդկութիւնն , որ եռանդով կրտարած է լոյսը , դպրոցներ բանալով ամենուրեք հասարակ ժողովրդեան համար եւ գիտութեան գանձի մէկ մասովն գոնէ հարստացնել կուզէ :

Երկրորդ յօդուածով մը պիտի ցոյց տանք արդի քաղաքակրթութեան նպաստող մի ուրիշ տարրին , այն է մարդասիրական ոգւոյ զարգացման վրայ :

## ՆԱԽԱԴՈՒԹՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔ

Մարդկային սեռի զարգացման եւ ժամանակաց կեդրոնն էր Մարդեղութիւն Աստուծոյ ի Քրիստոս : Այնուսկսանի եւ ի նմա կրկատարուի «լրումն ժամանակին յորում առաքեաց Աստուած զորդին իւր» (Գաղ . Դ , 4) , եւ բոլոր աշխարհի եղելութիւններն նորանից յառաջ այդ ահաւոր խորհրդոյ պատրաստութիւնն էին : Հեթանոս քաղաքակիրթ աղգաց մէջ՝ այդ զարգացումն բոլորովին մարդկային ուժով եւ կարողութեամբ ուղեցին յառաջ մղել : Հրէից մէջ , ընդ հակառակն , անընդհատ աստուածային յայտնութիւնն կրկատարէր այդ պաշտօնը : Երկօքին միասին կընթանան մինչեւ ի «լրումն ժամանակի» , իւրաքանչիւր մէկը իւր յատկութիւններովն Քրիստոսի Եկեղեցւոյ տարածման կըծառայէ : Մինչդեռ հեթանոս եւ հրեայ աղգաց լուսաւորութիւնն քրիստոնէութեան տարածումն շատ դիւրացուց , պիտի տեսնենք որ ո՛չ հեթանոսութիւնն եւ ո՛չ մովսիսական օրէնքն կարող եղաւ կամ կարող էր մարդոյս հոգեւոր կարօտութիւն լցուցանել , եւ ոչ իսկ այն վսեմ բարոյականութեան մէկ նշոյլն ցոյց տալ աշխարհի զոր Քրիստոս հաստատեց իւր Եկեղեցւոյ մէջ :

## ՀԵԹԱՆՈՍՔ .

Հնադարեան մարդիկ՝ բնութեան մերկ եւ անարւեստ գեղեցկութեամբն եւ առատութեամբ չըջապատեալ՝ աշխարհէս դուրս գերագոյն ոմն էիցս պատճառ չըճանաչեցին : Բնութիւնն՝ իւր առատութեամբն ու վայելչութեամբ երկրպագութեան եւ պաշտելոյ աւելի արժանի երեւեցաւ նոցա քան թէ աշխարհէս դուրս եղող աննիւթ եւ անձնաւոր Աստուած մի : Այս էր հեթանոսութեան սկզբնապատճառն որոյ գլխաւոր հիմն էր բնութեան աստուածացումն , եւ այս կրօնքի վերայ հիմնեցաւ իբրեւ արդիւնք՝ հեթանոսաց բարոյականն : Ամենէն աւելի ազդու կերպով հեթանոսութիւնն քրիստոնէութեան օգտակար եղաւ իւր մտաւոր զարգացողութեամբն , որ Եկեղեցւոյ մտաւոր գործոյն նախընթաց կարապետն էր . եւ ոչ ինչ նուազ իւր քաղաքականութեամբ եւ վաճառականութեամբ նպաստեց Եկեղեցւոյ գործին :

1. Կրօնի Հեթանոսաց. — Հեթանոսաց կոապաշտական կրօնքներն մէկ որոշ եւ յատուկ ուղղութիւն եւ վարդապետութիւն չունէին: Նոքա աւելի առօրեայ կենաց եւ մարդկային սովորութեանց համաձայն հնարքներ էին որով կրօնը իւրեանց հոգեւոր պիտոյքն լցուցանել. դիւթութիւն ու կախարգութիւնն իրեւ աստուածային յայտնութիւն կրհամարէին. եւ այսպէս քանի որ կրօնքն նիւթոյ եւ բնութեան մէջ կը գտնուէր, եւ կրօնքի նպատակն եւս բոլորովին նիւթեղէն եւ աշխարհային էր, քնական էր որ ամեն երկրի մէջ իւր աշխարհագրական յատուկ պարագայից համեմատ նաեւ կոապաշտութեան տեսակը ձեւակերպուէր: Բայց թէպէտ ըստ տեսակին հեթանոսական կրօնքներն կը տարբերէին ի միմեանց, սակայն ամենու մէջ ներքին քահանայական կրօնքն արտաքին ժողովրդական կրօնքէն զատ էր: Առաջինը գիտական տեսութիւններ էին որ հասարակ ժողովուրդն ոչ գիտէր եւ ո՛չ ըմբռնել կարէր. երկրորդն՝ վրպասանական հաւատ եւ սնապաշտ ծիսակատարութիւն էր: Այսու ամենայնիւ՝ հեթանոսութեան կրօնական զարգացումն բոլորովին զուրկ չէր ճշմարտութեան բեկորներէ՝ զոր օրինակ հեթանոսաց երրորդութեան եւ մարդկութեան վարդապետութիւնն, որպէս եւ չարի եւ բարւոյ գոյութիւնն: Բայց այսպիսի ճշմարտութեան նշոյլներ՝ այն բաղմամբիւ սխալանաց եւ արգելքներ ի հանդէպ արդիւնաւոր չեղան: Կոապաշտական ծիսակատարութիւնը իսթեութեան, չարութեան եւ անբարոյականութեան գործ իբ գարձած էր, այնպէս որ երբ մէկ կոատան պաշտօնեայ մէկ ուրիշ կոատան քահանայի հանդիպէր փողոցի մէջ ծիծաղելով գլուխը կը շարժէր: Գիտնականաց անկրօնութիւնն ամենայն ինչ կը ծաղրէր, իսկ հասարակ ժողովրդեան սնապաշտութիւնն անհաւատալի եւ սարսափելի երեւոյթներ կ'աւնոյր:

2. Բարոյական Հեթանոսաց — Հեթանոսութիւնն աշխարհային կրօն մի էր. ուստի իւր աստուածոց աներկիւղ այս աշխարհի մեղքերն ու պակասութիւններն կը վերագրէր: Իւր նուիրական գիրքերն շատ անգամ աստուածներէն օրինակ առնելով լիբը անբարոյականութիւն կը քարոզէին: Մարդկութեան եւ մարդասիրութեան գաղափարն անձանօթ էր հեթանոսաց. նոքա միայն ազգութիւն կը ճանաչէին: Մինչդեռ գոռոզութիւնն արեւելեան

երկրաց մէջ կըտիրէր, արեւմտեանք հպարտութեան վերին ծայրն հասած էին, եւ ընդհանուր մարդկութեան իրաւունքն ու պարօքն օտարին ու գերուոյն կըզլանային: Կինը ամենեւին նշանակութիւն չունէր, բայց եթէ իբրեւ ազախին առն իւրոյ: Ինչպէս որ կրօնքի մէջ նոյնպէս բարոյականի մէջ երբեմն վեհ գաղափարներու կըհանդիպինք, բայց դոքա կամ սոսկ գաղափար կը մնան ընդ միշտ կամ շատ քիչ գործնական արդիւնք կ'ունենան, քանզի հիմունք չունին: Բարոյականութեան ամենէն անկեալ ժամանակն կայսերաց իշխանութիւնն էր, յորում Քրիստոս իբրեւ գառն ի մէջ գայլոց սկսաւ իւր յաղթութեան արշաւանքն:

3. Մշարո՞ր զարգացումն հեքանոսաց. — Հեթանոսական գիտութեանց եւ արուեստից զարգացումն որքան որ Եկեղեցւոյ համար նախապատրաստական կարեւորութիւն ունէր, գրեթէ բոլորովին Յունաց եւ Հռովմայեցւոյ աշխատութեան արդիւնքն էր, ինչպէս իմաստասիրութիւն (փլլոսոփայութիւն), բանաստեղծական տաղաչափութիւն եւ պատմագրութիւն, լեզուի եւ գաղափարների ճոխութեան, որպէս եւ ոճոյ բազմակողմանի բացատրութեան յատկութիւն, որ այդ յառաջադիմութեան հետեւանքն էր, եւ Եկեղեցւոյ գերբնական վարդապետութեանց բացատրութեան համար ամենէն յարմար միջոցն եղաւ, միեւնոյն ժամանակ այս գիտութիւններն մարդկան միտքն լուսաւորելով՝ ճանապարհ բացան Աւետարանի վարդապետութեանց:

4. Հեքանոսական փառաբանութիւնը. — Քանի որ հեթանոսք բոլորովին մարդկային եւ աշխարհային նպատակաւ կըգործէին եւ այս աշխարհէն դուրս ո՛չ յոյս ո՛չ բաղձանք ունէին, բնականաբար միշտ աշխատեցան իւրեանց աշխարհային տիրապետութիւնն հմուտ կառարութեամբ հաստատել եւ իւրեանց ոյժերն կեդրոնացնել: Աստ եւս մարդոյս նպատակն եւ Աստուծոյ կամքն պարզապէս կըզանազանին ի միմիանց. մինչդեռ մարդ իւր համար եւ իւր փառաց համար գործել կըլուսայ եւ կըկարծէ, Աստուած այդ գործն իւր յաւիտենական կամաց կըծառայեցնէ: Հեթանոսաց քաղաքականութիւնն այն օգուտն ունեցաւ Եկեղեցւոյ համար որ Հռովմայեցւոց անազին պետութեան ներքոյ աշխարհքիս տարբեր ազգեր եւ լեզուներ միացան եւ գրեթէ մէկ զօրաւոր եւ տիեզերական ազգ դարձան, որք մէկ լեզու մէկ կրթութիւն եւ միեւ-

նոյն սովորութիւններն ունէին եւ միմեանց առաւել կամ նուազ գաղափարակից էին : Այս միացման գործ սկսաւ Մեծին Աղեքսանդրի ջանիւք , եւ կատարելութեան վերին աստիճանը հասաւ հռովմայեցւոց տիրապետութեան ժամանակ : Ամենէն կարեւորն էր մէկ ընդհանրական լեզուի գոյութիւնն , որ էր յունարէն , որով քարոզութիւնն շատ դիւրացաւ եւ նոր կտակարանի յունարէն գրութիւնն եւս ապացոյց է այդ լեզուի ընդհանրութեան : Վաճառականութիւնն եւ նորա հետ միշտ կապուած երթեւեկն նաեւ աւուզողակի միջոց էր քրիստոնէութեան տարածման , քանզի քրիստոնեայ վաճառականք իւրեանց ապրանաց հետ իւրեանց քրիստոնէութիւնն եւս կըտանէին երկրէ երկիր եւ Աւետարանի սերմերն ամբողջ աշխարհի վերայ կըցանէին :

ՀՐԵԱՅՔ

1. Ընդհանուր տեսութիւն . — Աշխարհիս մոլորեալ ազգերէն մին — Հրէից ազգն — ընտրուեցաւ յԱստուծոյ , եւ յատկապէս ճշմարտութեան մէջ կրթուեցաւ ի պատրաստութիւն գալստեան Քրիստոսի , սակայն այս ազգն որ սահմանեալ էր ժարդկային ազգի փրկութեան խանձարուրն լինելու , հակառակ աստուածային հոգածութեանց՝ բազմիցս ապստամբեց Աստուծոյ օրինաց դէմ եւ այն վերին կրթութեանց անընդունակ գտնուեցաւ . եւ Քրիստոսէն քիչ ժամանակ յառաջ մարգարէներն եւ Աստուծոյ կամքն իւրեանց քնաց եւ քաղաքական դրից համեմատ կըբացատրէին : Օրինաց նիւթական նշանագիրներուն եւ արտաքին իրաց այնչափ կապուեցան , որ Աստուծոյ տեսչութեան դաղափարը բնորովին կորուսին : Երբ նոքա Հռովմայեցւոց ծանր լուծին տակ կըհեծէին , արդարեւ մեծ փափաքով Մեսիայի գալստեան կըսպասէին , բայց միայն նորա համար՝ որ զիրենք ժամանակաւոր նեղութիւններէ ազատէ , որովհետեւ իրենց հոգեւոր ու բարոյական խեղճութիւնը չէին ճանչնար : Հրէից բարոյական խեղճութիւնն աւելի յայտնի կ'երեւի նաեւ իւր մէջն եղած զանազան ազանգներէն ու կուսակցութիւններէն , որք իրարու սաստիկ հակառակ էին : Սոցա գլխաւորներն էին . —

Փարիսեցիք . — (Եբրայական Փռոշխալ բառէն , որ կընշանակէ բաժանեալ , որոշեալ , քանզի Փարիսեցիք մեծ

խտրութիւն կրգնէին իւրեանց եւ օտարազգաց եւ մինչեւ իսկ անտարբեր Հրէից միջեւ : Սոքա ժողովրդեան առջեւ ամենէն աւելի համարում ու ազդեցութիւն ունէին : Մովսիսական օրէնքներէն զատ՝ Սինայի օրէնսգրութեան ժամանակէն սկսած աւանդութիւններն եւս իբրև հաւատոյաղբիւր կրհամարէին : Աստուծոյ նախախնամութիւնն ու հոգւոյ անմահութիւնը կ'ընդունէին . ուստի եւ հանդերձեալ աշխարհք, վարձատրութիւն եւ պատիժ լինելուն եւ մեռելոց յարութեան կըհաւատային : Իւրեանց կենցաղավարութեան մէջ արտաքին սրբութիւն կըկեդօժէին , արտաքոյ կարգի փառասէր եւ ընչասէր էին , եւ զինքեանս օրինաց արտաքին բաներուն ու մարդկան աւանդութեանց պահպանութեան խիստ վրէժխնդիր ցուցանելով , հասարակ ժողովուրդէն վեր կըհամարէին : Բայց չի ուրացուիր՝ որ Հրէից մէջ եթէ մի ազնուական բան կար՝ փարիսեցւոց կըվերաբերէր : Սիւնէզրիոնն (Հրէից ազգային կրօնական ժողով) մեծաւ մասամբ ի նոցանէ կազմուած էր , եւ Քրիստոս իսկ ասաց , որ Հին կտակարանի յայտնութեան օրինաւոր պաշտօնեայններն նոքա էին : Հերովդէսի Թագաւորութեան ժամանակ նոցա թիւն 6, 000 է կ'անցնէր :

3. Սադուկեցիք . — (Եբր . Սադադիւլ բառէն որ կընըշանակէ , արդարք կամ առաքիլն իք , քանզի նոքա առաքինութիւնը կըգովէին ի սէր առաքինութեան) : Նոքա շատ ազատամիտ եւ մինչեւ իսկ անհաւատ էին : Աստուծոյ տեսչութիւն մարդկան գործողութեանց վերայ կ'ուրանային . նոյնպէս չէին ընդուներ հրեշաակներն ու հոգւոյ անմահութիւնն . ուստի եւ մեռելոց յարութեան չէին հաւատար : Բնականաբար այս աղանդն փարիսեցւոց սաստիկ հակառակ էր , եւ թէպէտ վերջիններնէն սակաւաթիւ էին՝ ժողովրդեան երեւելի եւ հարուստ դասակարգէն մեծ քաջալերութիւն եւ օժանդակութիւն կըստանային :


4. Եսսեացիք կամ Եսսեանք . — Նոր կտակարանի մէջ չեն յիշուեր , բայց աշխարհային պատմիչներ շատ տեղեկութիւն կուտան նոցա մասին : Սոքա Մեռեալ ծովուն ու Յորդանան գետի կողմերը ճգնելով զինքեան մտաւորական խոկմանց եւ նկատութեանց տուած էին : Ի մասին վարդապետութեան՝ աւելի փարիսեցւոց կընմանէին , բայց նոցա օրէնքները մեկնելու եղա-

նակը չէին ընդուներ, այլ գլխաւորապէս խորհրդական մեկնաբանութեան կընետեւէին: Նոքա մի տեսակ կրօնաւորաց կարգ կըկազմէին եւ միայն կրթեալ մարդիկ իբրեւ անդամ այդ ընկերութեան կընդունէին: Բոլորովին ամուրի կեանք կ'անցունէին, ունեցածնին հասարակաց էր, սղայոց կրթութեան հոգ կըտանէին, երկիրը կըգործէին եւ անմեղ ձեռագործներով կըզբաղէին: Հրէից սրբազան պաշտամանց չէին մասնակցեր, եւ կ'երեւի որ Քրիստոսի ժամանակ նոցա թիւը 4, 000 ի կընասնէր:

5. Սաւարացիք. — Իսրայելի տասն ցեղերուն գերութեան տարուած ժամանակի Պաղեստին մնացած Հրէից, եւ Ասորեստանի Ասորդան թագաւորէն ի Հրէաստան գաղթական բերուած հեթանոսաց մի խառնուրդ էին: Այս գաղթականներն հեթանոսութիւնը ձգելով՝ ճշմարիտ Աստուծոյ կրպաչայէին, Գարիգիմ լեռան վերայ, որ բաժնելու միջնորմն եղած էր, մի տաճար ունէին, եւ Հրէից պէս զոհ կըմատուցանէին քանզի կ'ասէին թէ այնտեղ միայն կարէ մարդ Աստուծոյ երկիրպագանել: Մովսէսի Հնգամատեանը միայն կընդունէին, բայց Հրէից նման Մեսիայի գալստեան կըպասէին:

6. Ժողովրդանոց. — Զկնի բարեկական գերութեան, Հրէից կրօնական կրթական հաստատութեանց կարեւորագոյնն էր Ժողովրդանոցն: Գերութենէն յառաջ եւ նոյն իսկ գերութեան ժամանակ՝ Ժողովրդեան հոգեւոր կրթութեան եւ զարգացման վերայ կընակէին մարգարէք, միշտ քարոզելով ու խրատելով: Բայց յետ այնորիկ մարգարէութիւնը դադարեցաւ, եւ նորա փոխարէն հարկ եղաւ ուրիշ միջոց գործ դնել որպէս զի կրօնի կրթական մասն եւս շարունակուի: Տաճարի արարողութիւնք, զոհ, պատարագ եւ այլն, կըկատարուէր որպէս յառաջ ժամանակի առանց ունէ կրթութեան հրահանգի, մանաւանդ որ հեռաւոր քաղաքների եւ գիւղերի մէջ բնակուող հրեայք հազիւ թէ տարին մէկ անգամ կրնային գալ յերուսաղէմ: Ուստի սովորութիւն դարձաւ յատուկ Ժողովարան կամ աղծթատեղի հաստատել քաղաքների եւ գիւղերի մէջ, ուր հրեայք կըԺողովուէին եւ զկնի պատշաճաւոր աղօթից՝ Հին Կտակարան կըկարգային եւ գիտուններն կըմեկնէին եւ Ժողովուրդը կըխրատէին: Բնական էր որ յընթացս ժամանակի Ժողովարանների միջոցաւ մովսիսական օրէնքն փոփոխութիւն կրէր եւ ռաբինական ականդութիւններով

ու մեկնութիւններով խճողուէր: Փարիսեցիք մանաւանդ իւրեանց կեղծ սրբակրօնութեան համար ժողովարանների մէջ ամենէն յաւ վաճառատեղի կը գտնէին. նաեւ Մեսիայի գալստեան մարմնաւոր եւ աշխարհային ակնկալութիւններն ու յոյսերն եւս աստ սովորեցին մշակել:



### ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Արմաշի Դպրեվանուց Վանահայր Գեր. Տ. Եշխէ Եպիսկոպոս Դուրեան Վարազայ Խաչի Տօնին Չարխափան Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ քարոզ խօսած է, որոյ հետեւեալ համաօտութիւնը կը հրատարակեմք ի շինութիւն հաւատացեալ ընթերցողաց:—

Բացատրելէ վերջ օրուան տօնին նշանակութիւնը՝ մասնաւորապէս խօսեցաւ Խաչ բառի գործածութեան սխալ իմացումին վրայ, ըստ որում այդ անունով կ'հասկնան շատեր՝ փորձութեան, ցաւերու, սուգի եւ տառապանքի կեանք մը: Եթէ Քրիստոնէութիւնն իր պարծանքի առարկան՝ այդ ամէնուն համար ներկայացուցած ըլլար՝ տրտմութիւնը նուիրագործած պիտի ըլլար առանց զանի զանազանելու «աշխարհի տրտմութիւն» ըսուած ա՛յն հոգեբանական վիճակէն՝ որ «զմահ կ'գործէ», կամ առ առաւելն՝ Քրիստոնէութիւնը խորհրդանշան մը պիտի հնարած ըլլար՝ բոլոր ժամանակաց մարդկութեան աղետաւոր ճակատագրին համար՝ որ հեծութեամբ եւ երկունքի ցաւով է գրոյմուած:

Տրտմութեան բաժինը կրօնքին մէջ ամէն ատեն ազնուացուցիչ հանգամանք մը չունի, ինչպէս կ'կարծուի. տրտմութիւնը՝ թէ անյաջողութիւններէ գայ, թէ հիւանդութիւններէ, եւ թէ կորուստներէ՝ քիչ անգամ կրնայ ներհակ ազգեցութեամբ մը՝ լաւագոյնը գործել տալ մարդուն. միշտ եւ գրէթէ անվրէպ եղանակաւ, տրտմութիւնը մահ է նոյն իսկ քրիստոնէական կրօնքին համար: Մարդ իր տրտմութեան ժամերուն է որ կ'տարակուսի, կ'ընգվզի Աստուծոյ արդարութեան դէմ: Յոր իր

տրտմութեան մէջ անիծեց իր օրը, եւ ուրիշներ խափանեցին իրենց յոյսերն ու շնորհները:

—Տրտմութիւնը կ'նուաստացնէ, կ'խորտակէ, կ'ջլատէ մարդը. մինչ քրիստոնէական կրօնքը կ'սիրէ զուարթ հոգիները. որ իրենց մարմիններուն հաւասար կարենան խայտալ: Ո՛չ. ինչը տրտմութեան հրաւէր մը չէ երբէք. թէ Գողգոթայի վրայ արիւնոտի, թէ Վարագի վրայ վառի, եւ թէ՛ գերեզմանական հողակոյտի մը վրայ հովանանայ:

Վարագայ լեռան վրայ երեւցող ինչն ալ տրտմութեան յաւելուած մը բերելու սահմանուած չէր. բոլոր ժողովրդեան ցնծութիւնն եղաւ այն, եւ Շինող կաթողիկոսին համար կենդանի մխիթարութիւն մը:

Ինչչէն շա՛տ առաջ չարչարուած էր մարդկութիւնը. ինչչէն շա՛տ ետքն ալ դեռ կ'չարչարուի հոգեւորապէս. սակայն ինչ որ իսկապէս ինչին պաշտօնն ու ազդեցութիւնն է՝ մխիթարութիւնն է այն եւ ո՛չ թէ վիշտը, սփոփանքն է այն եւ ո՛չ թէ տառապանքը. ա՛յլ պէս պէտք է նկատել ինչը, լուսեղէն թեւերով տարածուած զօրութիւն մը ուրախութեան եւ փրկութեան, եւ ո՛չ թէ ցաւազին եւ տրտում կեանքի մը ստուերամած կարկառումը:



## ՃՇՄԱՐԻՑ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

( Էջ 12ր Սուրբ Գրքին . )

ԳՐԵԱՅ ԱՐԺ . ՏԵՐ ՍԵՐՈՎԲԵ Վ . ՍԱՍՈՒԻԵԼԵԱՆ .

Ձեր կեանքին մէջ պէտք չէ՞ք ունեցած մէկու մը , որ սովորական մարդիկներէն քիչ մը տարբեր սիրտ ունենայ ձեր նկատմամբ , որուն սրտապնդիչ խորհուրդներէն , խրատական խօսակցութիւններէն եւ բարի ընկերութիւնէն կարողանաք ըստ ամենայնի օգտուիլ . — այդ մէկն է ձեր ճշմարիտ բարեկամը :

Երբ տիրուր ամպեր պատած են ձեր չորս բոլորտիքը , երբ ամէն կերպ փոթորիկներ չրջապատած են զձեզ , աղէտներու , արկածներու եւ ձախորդութեանց մէջ խորասուզուած էք , դառն արտասուքներ կը հոսեն ձեր աչքերէն . . . պէտք չունի՞ք մէկու մը , մխիթարիչ հրեշտակի մը , որ դայ ձեր արցունքները ցամքեցնէ , որ ձեր վըշտացը վշտակից եւ ցաւերուն ցաւակից ըլլայ . — այդ մէկն է ձեր ճշմարիտ բարեկամը :

Դուք զձեզ երջանկութեան մէջ կը համարիք , յաջողութիւններ ամէն կողմէն կը հասնին ձեզի , ամէն տեսակ անձկութիւններ հեռացած են ձեզմէ . պէտք չունի՞ք զձեզ ի սրտէ սիրող մէկու մը , զոր մասնակից , հաղորդակից ընելով ձեր երջանկութեան , ձեր բախտին՝ եւս առաւել երջանիկ եւ բախտաւոր զգաք դուք զձեզ եւ կատարեալ ըլլայ ձեր ուրսխութիւնը . — այդ մէկն է ձեր ճշմարիտ բարեկամը :

Գեղեցիկ խորհրդածութիւն մը կ'ունենաք ձեր մտքին մէջ . որպէս զի ձեր մտքին այդ արտադրութիւնը չի բխանայ կամ ի կորուստ չմատնուի մոռացմամբ՝ փոխանակ բեղմնաւոր եւ արդիւնաւոր լինելու յարմարագոյն ժամանակին . կամ ձեր մէկ վատ խորհուրդը չիբականանայ , այլ բարեփոխուի յօգուտ ձեր եւ այլոց . պէտք չէ՞ք զգար մէկու մը , որոյ հետ կարծեաց փոխանակութիւն մը անհրաժեշտ ըլլայ ձեզ համար . — այդ մէկն է ձեր ճշմարիտ բարեկամը :

Պակասութեանց , մոլութեանց մէջ ինկած էք եւ անտեղիակ ձեր վիճակի վտանգաւոր կացութեանէն , անձնասիրութեամբ դուք զձեզ ուղղութեան , առաքինութեան

ճանրուն մէջ կը կարծէք . պէտք չունի՞ք մէկու մը , որ ամէն բան — մինչեւ իսկ ձեզի ատելի ըլլալը աչք առնելով՝ անկեղծութեամբ , մարդասիրութեամբ , բարեսրտութեամբ գայ ձեզի մօտենայ , մտերմաբար իմացնէ ձեզի՝ ձեր առջեւ բացուած վիշը , խորխորաւոր , զձեզ դարձնէ մոլութեան փշալից ճանապարհներէն դէպ ի երկնաչու ուղին առաքինութեան . — այդ մէկն է ձեր ճշմարիտ բարեկամը :

Ո՛հ , մեզմէ ո՛ր մէկերնիս պէտք չունինք ասանկ բարեկամի մը , այսպիսի պահապան հրեշտակի մը : — Ամէն ճիգ թափեցէք , եղբա՛րք իմ , ամէն ջանք ի գործ գրէք աշխարհիս մէջ զո՞նէ մէկ հատ անկեղծ , առաքինի , խոհեմ , դաղ սնապահ , ուղղամիտ եւ անշահասէր բարեկամ մը ունենալու : Ի սկզբան զգուշութեամբ փորձեցէք զայն , ուշի ուշով ուսումնասիրեցէք անոր նկարագրերը , դժուարահաճ եղէք բարեկամութիւն — հոգեւոր սուրբ եղբայրակցութիւն — հաստատելու մէջ , վասն զի «սակաւք են ստոյգ բարեկամք՝ աշխարհիս վրայ տիրապետող անձնասիրութեան , շահախնդրութեան , նախանձու եւ այլ պէս պէս կրից պատերազմին մէջ» . — բայց անգամ մը որ համոզուիք եւ հաստատէք , պահեցէք զայն եւ տարէք մինչեւ ի գերեզման եւ գերեզմանէն ալ անդին :

Եւ ի՛նչ գովեստներ կ'ուղէք , որ տուած չ'ըլլան հին ու նոր իմաստուններ ճշմարիտ բարեկամութեան մասին : «Բարեկամ հաւատարիմ՝ աշտարակ ամուր , եւ որ եգիտ զնա՝ եգիտ գանձ :

Անկեղծ բարեկամութիւնը՝ երկնային ուրախութեանց նախաչաւիղն է :

Բարեկամութիւնը հողի մ'է , որ երկու մարմնոց մէջ կը բնակի եւ սիրտ մը որ երկու հոգեոց մէջ կը բնակի :

Երջանիկ է այն , որ ունի ճշմարիտ բարեկամներ :

Ամենէն մեծ չարիքն է՝ չ'ունենալ բարեկամներ :

Հայր մը գանձ մ'է , եղբայր մը՝ երջանկութիւն . իսկ ճշմարիտ բարեկամը թէ՛ մին եւ թէ՛ միւսն :

Առաքինական բարեկամութիւնք՝ քաղցրագոյն պըտուղներ են իմաստութեան :

Բարեկամութիւնը տրուեցաւ մեզ իբրեւ օգնական առաքինութեանց եւ ոչ իբրեւ ընկեր մոլութեան :

Կրնանք ապրիլ առանց եղբօր , բայց ոչ առանց բարեկամի» : —

Իմաստուններու այս պերճիմաստ խօսքերէն յետոյ

կրնայի բազմաթիւ օրինակներ ի մէջ բերել հոս ճշմարիտ եւ անկեղծ բարեկամութեան վրայ, բայց որպէս զի ձեր մտքերը չի ծանրաբեռնեմ օրինակներու շատութեամբ, կը բաւականանամ յիշատակելով աստանօր մի միայն Դաւթի եւ Յովնաթանի բարեկամութիւնը, որ ա՛յնքան գեղեցիկ գոյներով նկարուած է Ս. Գրոց էջերուն մէջ:

Յովնաթան իշխան մը եւ Իսրայէլեան թագին եւ դաւազանին ապագայ ժառանգորդը. իսկ Դաւթ աննշան հովուի մը գաւակը, ինքն ալ իւր կարգին հովիւ մը, ինքնին Բեթլէհէմցի կը վկայէ իւր մասին՝ «ես այր մի տառապեալ եմ եւ ո՛չ փառաւոր»: Հետեւաբար շահուակնկալութիւն մը չէ որ զՅովնաթան կը կապէ ընդ Դաւթի, եւ ոչ ալ մեզ ծանօթ արտաքին ուրիշ պարագայ մը կրնար պատճառ դառնալ իրենց աւնապակ սիրոյն եւ մտերմական եղբայրակցութեան: Յովնաթան բարոյական արժանիքներ, հոգեւոր ու մտաւոր ձիրքեր միայն կը գտնայ իւր բարեկամին վրայ, անոր Աստուածսիրութիւնը եւ հայրենասիրութիւնը կը հրապուրեն զՅովնաթան. եւ ասոնք են բուն իսկ իրենց բարեկամութեան կապերը, երբ «ուխտեաց ընդ նմա Յովնաթան ուխտ՝ առ ի սիրել զնա ըստ անձին իւրում»: Այսպէս առաքինութեան եւ անարատ սիրոյ վրայ հաստատուած բարեկամութիւննին այնքան սերտ եւ այնքան ջերմ եղաւ, որ ըստ վկայութեան Ս. Գրոց «ոգի Յովնաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Դաւթի», այսինքն ալ այնուհետեւ երկու մարմիններու մէջ իբրև մէկ սիրտ, մէկ հոգի ապրեցան, իրենց ապագայ կենաց մէջ ցոյց տալով մեզ անձնուիրութեան սքանչելի օրինակներ, մանաւանդ գործնապէս սովորեցնելով մեզ թէ՛ ամենէն աւելի մեր բարեկամին անձկութեան, տառապանաց եւ հալածանաց ժամանակ պարտաւոր ենք օգնել եւ նպաստել անոր, ի պահանջել հարկին մեր կեանքն ալ վտանգի ենթարկելով՝ ի սէր բարեկամութեան:

Երբ կը յիշենք թէ՛ կեղծ բարեկամներ շատ ու շատ են, սեղանակից բարեկամներ, շահու բարեկամներ, պաշտօնի բարեկամներ, որոնք յայտնի թշնամիներէն հազար անգամ աւելի վնասակար են եւ վտանգաւոր, այն ժամանակ միայն կը հասկնանք ճշմարիտ բարեկամի մը արժանիքը, որ փոթարկի, ձախորդութեան միջոցին, առանց կանչուելու, ինքն իրմէ կը վազէ կու գայ եւ

օգտամատոյց կը լինի մեզ : Այսպէս վարուեցաւ Յովնաթան Դաւթին հետ իւր ամենէն նեղ օրերուն մէջ :

Յետեայ որդւոյն — Դաւթի շահած յաղթութեան պատկերը պատճառ եղան , որ Յովնաթանու թագաւոր հայրը Սաւուղ սաստիկ զայրացաւ անոր դէմ , վասն զի «ամենայն Իսրայէլ եւ Յուդայ սիրէր զԴաւթի» . — Ի՛նչ մեծ յանցանք անմեղ պատանիի մը համար իւր անմեղութիւնը . . . — Սաւուղ ա՛յնքան յառաջ կը տանի իւր զայրոյթը , որ մինչեւ իսկ մտադրութիւն կ'ունենայ Դաւթի թը «արկանել ի ձեռս այլազգեաց» , այսինքն իւր թշնամեաց : Բայց Դաւթին անկեղծ եւ անձնուէր բարեկամը , Յովնաթան հոն է եւ արթուն ակամբ կը հսկէ իւր հալածեալ մտերմին վրայ : Իւր հօր սպառնալիքներ լսած՝ կը փութայ Դաւթին մօտ եւ կ'ըսէ անոր ամենայն անկեղծութեամբ — «Սաւուղ՝ հայր իմ խնդրէ սպանանել զքեզ , զգոյշ լի՛ր , թաքիջի՛ր եւ նստիջի՛ր ի թաքստեան» : Հօրը առջեւ ալ պաշտպան կը հանդիսանայ իւր բարեկամին անմեղութեան . «մի՛ մեղեցէ արքայ ի ծառայ իւր Դաւթի , զի ոչինչ մեղաւ նա քեզ , եւ գործք նորա բարութեամբ են առ քեզ յոյժ . եւ եղ զանձն իւր ի ձեռին իւրում եւ հնար զայլազգին (Գողիար) եւ արար փրկութիւն մեծ , եւ ամենայն Իսրայէլ տեսին եւ ուրախ եղին եւ ընդէ՛ր մեղանչիցես յարիւն արդար , սպանանել զԴաւթի տարապարտուց» : Արդարեւ քաջարտութիւն . խրոխտացեալ վեհապետի մը ուղղակի երեսին զարնել իւր անարդար եւ անխոհեմ վարմունքը եւ զայն ի զգաստութիւն հրաւիրել . . . — Բայց ուր սէր կայ , հոն երկիւղ չիկայ . անկեղծ սէրը հրաշքներ կը գործէ :

Յովնաթան կը յաջողի ազատել զԴաւթի Սաւուղի բարկութենէն , բայց եւ այնպէս կը պարտաւորի վերջապէս բաժնուիլ իւր սիրելի բարեկամէն . սակայն սրտերնին անբաժան են ի միմեանց , եւ շատ սրտառուչ է Յովնաթանու խօսքն , զոր վերջին անգամ ուղղեց առ իւր հոգեկից եղբայրն՝ Դաւթի , «Երթ ի խաղաղութիւն , եւ որպէս երդուաք մեք երկոքին յանուն Տեառն եւ խօսեցաք , Տէր լիցի վկայ ընդ իս եւ ընդ քեզ» : — Բախտի ամէն ելեւէջներուն մէջ հաստատուն եւ աննուաղ մնաց Դաւթի եւ Յովնաթանու բարեկամական անկեղծ սէրը , եւ պիտի ըսեմ թէ՛ Դաւթին դէմ Սաւուղի հանած հալածանաց միջոցին առաւել եւս կրկնապատկուեցաւ Յովնաթա-

նու սէրն առ Դաւիթ . — արդարեւ սէ՛ր սուրբ եւ յաւերժական , որ ոչ իսկ մահուամբ միոյն մարեցաւ կամ նուազեցաւ , այլ եւս քան զեւս վառեցաւ , բորբոքեցաւ : Այո՛ , անկեղծ բարեկամի մը յիշատակն իսկ այնչափ աւնոյշ է , որ նորա մահուանէն վերջն ալ կըտեւէ : Այսպիսի բարեկամութեան կապն ալ անքակտելի է եւ արտաքին ձեռք մը չի կրնար քակել երբէք այդ կապը : Յիշեցէք Դաւթին յորդ եւ աղի արտասուքը , զոր թափեց ի լուր Յովնաթանու մահուան եւ այն սրտառուչ խօսքերը , որ ուղղեց իւր մեռած — բայց իրեն համար միշտ կենդանի — բարեկամի յիշատակին . . . :

Երանի՛ ուրեմն այն բարեկամներուն որոնք սուրբ սիրով միացած ընդ միմեանս ի սիրտ եւ ի հոգի , փոխադարձաբար ջանադիր կը լինին իրարու օգտակար ըլլալ ոչ միայն նիւթապէս , այլ մանաւանդ մտաւորապէս եւ բարոյապէս , նպաստել միմեանց զարգացման եւ յառաջագիմութեան ի բարիս եւ յառաքինութիւնս , ձեռնտու լինել ի ժամանակի փորձութեանց եւ անձկութեանց եւ ի վեր քան զամենայն՝ հաւատարիմ մնալ բախտի ամէն ելեւէջներուն մէջ :

Ձեր այս ընկեր բարեկամներէն զատ , ազնիւ բարեկամներս , բարեկամներ ընտրեցէք նաեւ գրքերու մէջէն ընտիրները , շինիչները եւ հրահանգիչները : որոնք կրնան անկեղծօրէն խօսիլ եւ խրատել զձեզ եւ զօրեղապէս նպաստել ձեր մէջ բարւոք եւ գովելի նկարգրի մը կազմութեան : Բայց ամէն բանէն առաջ ձեր բոլոր ուժով , ձեր բովանդակ զօրութեամբ աշխատեցէք զԱստուած , ձեր Փրկիչը ունենալ ձեզ բարեկամ («Դուք բարեկամք էք իմ եթէ առնիցէք՝ զոր եսն պատուիրեմ ձեզ» . Յովհ . ԻՅ . 14) . առանց Անոր , բարեկամութիւնք պարզապէս թշնամութիւնք են՝ բարեկամութեան գիմակին տակ քօղարկուած . . . : — «Ուր իցէ մտերիմ բարեկամ , որ յամենայն ի վիշտս առ բարեկամի իւրում կացցէ մնասցէ : — Դու , տէ՛ր , Դու միայն ես մտերիմ յամենայնի , եւ բաց ի քէն չիք այլ ոք » :

Յոպպի , Հոկտեմբեր 1900

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՔԵԱԼԻՔ ԲՐԻՍՏՈՍԻ

Տէրն մեր Յիսուս Բրիստոս իւր երկրաւոր տնօրէնութեանց միջոցին ընտրեց ասաներկու Գալիլեացիներ իբրև իւր մտերիմ ուղեկիցներ և մասնաւոր աշակերտներ, որոց Առաքեալ անունը (որ կընշանակէ Ղրկուած) տուաւ: Սոքա ըստ մեծի մասին աղքատ և ստորին դասակարգէ մարդիկ էին, որոցմէ շատ քիչեր իւրեանց լեզուն գրել կարգալ դիտէին. այսու հանդերձ նոքա կոչուեցան ամենաբարձր և ամենէն նուիրական պաշտօն կատարելու մարդկային ազգի համար:

Բոլոր մեծ վարդապետներ կամ ուսուցիչներ իւրեանց մասնաւոր փոքրաւորներ կամ աշակերտներ ունեցած են, օրինակի համար Ս. Յովհաննէս Մկրտիչ (Մատթ. Թ. 14):

Ս. Գրոց մէջ Տասներկու թիւը յաճախ գործ կ'ածուի, և կերպիւ իւրիք խորհրդաւոր նշանակութիւն ստացած, նուիրական թիւ եղած է: Թրինակի համար, յիշուած են.

1. Երկոտասան ազգք իսմայէլի, Ծննդ. Ժ. 20.
2. Երկոտասան որդիք Յակովբու, Ծննդ. Լե 22.
3. Երկոտասան աղբիւրք Ղրոց յեղիմ, Եղից. Ժ. 27.
4. Երկոտասան ակունք քահանայապետի Լանջապանակի վերայ, Եղից. Լիւ 21.
5. Երկոտասան լրտեսք, Թուոց. Ժ. 1-25.
6. Երկոտասան աստեղք, Յայտն. Ժ. 1.

Առաքելոց անուններն չորս տարբեր ցուցակներով աւանդուած է նոր կտակարանի մէջ: Մատթ. Ժ. 2-4, Մարկ. Գ. 16-19, Ղուկ. Զ. 14-16. Գործ. Ա. 13: Այս ցուցակներն ընդհանրապէս երեք խումբերու բաժնուած են:

Առաջին խումբն կը պարունակէ Սիմոն Պետրոս, Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս: Ս. Պետրոս միշտ յառաջ յիշուած է, և միւս երեքն տարբեր կարգաւ. —

Մատթ.	Մարկ.	Ղուկ.	Գործ.
Անդրէաս	Յակոբոս	Անդրէաս	Յովհաննէս
Յակոբոս	Յովհաննէս	Յակոբոս	Յակոբոս
Յովհաննէս	Անդրէաս	Յովհաննէս	Անդրէաս.

Այս խումբի երեքն (այսինքն, Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս) Բրիստոսին կ'ընկերանային նորա ամենէն նշանաւոր տնօրէնութեանց միջոցին. ինչպէս, օրինակի համար.

1. Այլակերպութեան ժամանակ. Մատթ. Ժ. 1.

2. Գեթսեմանի պարտիզին մէջ շարչարանաց դիշերն. Մասք. ԻՁ 37.

3. Յայրոսի դստեր յարուցման միջոցին. Մարկ. Ե 37:

Ս. Անդրէաս ևս կըլիշուի այս խումբի մէջ, երբ Քրիստոս Տաճարի կործանումն կըգուշակէր, Մարկ, ԺԳ 3. Սիմոն Պետրոս և Անդրէաս եղբարք էին. Յովն. Ա 40: Յակոբոս և Յովհաննէս (որդիք Զեբեդեայ) եղբարք էին. Մարկ. Ա 19:

Երկրորդ խումբն շորս հոգիէ բաղկացեալ է. ոոցա մէջ առաջին տեղը կըբռնէ Ս. Փիլիպպոս, և միւսներն յաջորդաբար այլ և այլ կարգօք. —

Մասք.	Մարկ.	Ղուկ.	Գործոց.
Բարթուղիմէոս	Բարթուղիմէոս	Բարթուղիմէոս	Թովմաս
Թովմաս	Մատթէոս	Մատթէոս	Բարթուղիմէոս
Մատթէոս	Թովմաս	Թովմաս	Մատթէոս.

Բարթուղիմէոս կըհամարուի նոյն ընդ Նաթանայէլի, որ յիշուած է Յովն. Ա 45: (Բարթուղիմէոս անունը յիշուած չէ Յովհաննէս Աւետարանին մէջ, ինչպէս որ Նաթանայէլ ևս յիշուած չէ միւս Աւետարանաց և Գործոց Առաքելոց մէջ:)

Երրորդ խումբին մէջ Յակոբոս Ալփեայ առաջնակարգ տեղը կըբռնէ, և յետոյ միւսները կըլիշուին հետեւեալ կարգաւ. —

Մասք.	Մարկ.	Ղուկ.	Գործոց.
Թադէոս	Թադէոս	Սիմոն Նախանձայոյց	Սիմոն Նախանձայոյց
Սիմոն Կանանացի	Սիմոն Կանանացի	Յուդա Յակոբեան	Յուդա Յակոբեան
Յուդաս Իսկարիովտացի	Յուդաս Իսկարիովտացի	Յուդաս Իսկարիովտացի	

Ս. Յակոբոս զկնի Համբարձման Տեառն Ս. Երուսաղէմի եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաջին Եպիսկոպոսն եղաւ: Թադէոս, որ կըկոչուէր նաև Ղեբէոս (Մասք. Ժ 3), և երբեմն Յուդա, Հայոց առաջին լուսաւորիչն էր: Ս. Մատթիա ընտրուեցաւ Իսկարիովտացի Յուդասի տեղ, որ մատնութեամբ և անձնասպանութեամբ անկաւ յԱռաքելութեան. Գործ. Ա 26:

Ս. Յակոբոս, եղբայր Յովհաննէս և որդի Զեբեդեայ, առաջին առաքելական մարտիրոսն էր որ Հերովդէս Թազաւորի ձեռամբ սպանուեցաւ, Գործ. ԺԲ 2:

Առաքելոց պաշտօնն էր. —

- Ա. Նախ քան զՀամբարձումն, իբրև աշակերտք Քրիստոսի,
- (1) Անձնական ծառայութիւն մատուցանել Նմա. Յովն. Դ 31-34:
  - (2) Նորա ընկերք և բարեկամք լինիլ, Յովն. ԺԵ 14:
  - (3) Նորա երկրաւոր անօրէնութեանց վկայք լինիլ,

Գործ . Ա 22 , Յովհ . Ա 48 :

Բ . Չկնի Համբարձման , Իբրև Առաքեալք ,

(1) Աստուծոյ Եկեղեցին հաստատել , Իբրև վեմք անկեան , Մատթ . ԻԸ 19-20 :

(2) Աւետարանը քարոզել , Մատկ . ԺԶ 15 :

(3) Եկեղեցին կառավարել և հովուել , Գործ . Ի 28 . Բ . կորնթ . ԺԱ 8 :

(4) Ի Գրիստոսէ յանձնեալ աստուածային իշխանութիւնը իւրեանց յաջորդաց աւանդել , որպէս զի Առաքելական իշխանութիւն և ուղիղ յաջորդութիւն յարատև մնայ ի վերայ երկրի , Գործ . ԺԳ 2 :

Խրատական . — 1 . Մեծարել Առաքեալները և նոցա գործերը :

2 . Հաւատարիմ մնանք ի վերայ հիման Առաքելոց հաստատեալ Եկեղեցուն :

3 . Նոցա քարոզութիւնը յարգենք , և նոցա օրինակին հետևիմք :

Ո . ԲԸ . Դ .

## Ամերիկայի Հայոց Նորահասակ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութիւն

Կրտսեղեկանանք որ Ամերիկայի Հայ գաղթականութեան մէջ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոսի նախագահութեամբ Երիտասարդաց Քրիստոնէական ընկերութիւն մի հաստատուած է նման այն բազմաձիւղ ընկերութեանց որ Ամերիկայի եւ Անգղիոյ մէջ այնքան օգտակար եղած են եւ են երիտասարդաց ընդհանրապէս : Շատ գովելի է Ամերիկայի Սրբազան Առաջնորդի ձեռներէցութիւն այս մասին , որ ամեն նախապաշարում ի բաց զնելով՝ չի վախնար օտարներէ փոխ առնուլ ինչ որ բարի եւ օգտակար է իւր հօտի երիտասարդաց համար :

Այս ընկերութեան գլխաւոր նպատակն է՝ երիտասարդաց հոգեւոր ու մտաւոր , բարոյական ու ֆիզիքական օրինաւոր զարգացման համար հոգ տանիլ : Այս նպատակին հասնելու համար իւրաքանչիւր մասնաձիւղ ունի իւր առանձին տունը կամ ժողովատեղին , յորում ամիոփիուած են զբարարան եւ ընթերցարան , զբօսարան , ճաշարան , մարզարան , դասարաններ եւ այլն : Մարմնամարզն առաջնակարգ տեղը կը բռնէ . վասն զի այդ ընկերութեանց հիմնադիրը կը հաւատար որ , ըստ հոովմայե-

ցւոց առածին, Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ կրնայ գոյութիւն ունենալ:

Ամենայն յաջողութիւն կրմաղթենք Ամերիկայի Հայոց այս ամենակարեւոր ընկերութեան. տացէ Տէր, որ նորա ճիւղերը բազմապատկուին եւ մինչեւ ի ծագս հայրենեաց մեր անխնամ թողուած երիտասարդութեան վերայ առաքինութեան լոյսը սփռեն:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

Հայր պատուական,

Այս օրեր բազդաւորեցայ իմանալու որ Եկեղեցի Հայաստանեայց կրօնաթերթ վերակենդանացած է Ձեր խմբագրութեամբ: Այս լուրը լցոյց զիս բերկրութեամբ. փութացի բաժանորդագրել պարբերականիդ առաջին թիւէն. կը փափագիմ ի բոլոր սրտէ որ պարբերականիդ հրատարակութիւն անընդհատ շարունակի միեւնոյն դիրքով եւ ոգւով, եւ ես ցորչափ կենդանի եմ յարատելիմ բաժանորդագրութիւնս ուր եւ ալ լինիմ: Կղձամ պարբերականիդ անընդհատ շարունակութիւնը ո՛չ անոր համար միայն զի համակրած եմ ես անոր ոգւոյն եւ ուղղութեանը, այլ մանաւանդ անոր համար որ թերեւս միջոց մը լինի գարմանելու այն կրօնի անտարբերութեան, որուն սանձարձակ յառաջդիմութենէն օր մը հայ ընտանեաց ներդաշնակութեան եւ բարոյականին պիտի սպառնայ, եթէ սպառնացած իսկ չէ բացառապէս: Այս վիճակ անշուշտ արդիւնք է յոռի դաստիարակութեան որ ի կրթական յարկս, զի հազուադիւտ է աստ տեսնալ բաւականին նախնական գիտութիւնք ստացած ընթացաւարտ աշակերտ մը որոյ կրօնի բարոյականին տոհմային յատկանիչն յինքն կենդանի պահած լինի եւ յանձնապատանութենէ հեռի բարեկիրթ մը ներկայի: Ազդ. լրագիրք եւս որ ընդհանրական քարոզիչներ գիտինք, նկատմամբ բարեկրթութեան կրօնական, ընտանեկան, ընկերական եւ այլ շինիչ ներդաշնակութեանց՝ նոքա եւս իրենց կոչումը դժբաղտարար շարաշար կը գործածեն. կրօնի պատկան

խնդրոց մասին իրենց կարծիքը փոխանակ հաւաքելու իրենց անձանց իսկ վերաբերող եկեղեցւոյ պատմութենէն կամ ընդհանրած մատեաններէն, կը հաւաքեն զայն արեւմտեան կամ պարզապէս մեր եկեղեցւոյն չը վերաբերող վարդապետաց կամ պատմաբանից կարծիքներէն եւ անոր կ'ուզեն հետեցնել մեր ազգային եկեղեցին: Զարմանալին այն է որ մեր ազգի քանի մը ուսեալ կարծուած վարդապետներէն ոմանք ալ, հակառակ իրենց դաւանութեանցն որ ի ձեռնադրութեան անդ իւրեանց, ձայնակցեցան լրագրաց կարծեաց. եւ սկսան կարգ մը եկեղեցւոյ աւանդութեանց հակառակ խնդիրներով ազգային տոհմային խաղաղ մտքի կենցաղավարող հազարաւոր ընտանեաց ականջները ապականել, որոյ արդիւնք է անչուշտ մայրաքաղաքիս մէջ անտի եւ այսր՝ բայց այս վերջերս գրեթէ ամէն օր մին զկնի միւսին եւ գաւառներէն ալ ամէն թղթաբերով ամուսնոց ի միմեանց դժգոհութեան եւ ամուսնալուծումն խնդրող բերաններ եւ գրեւ կը վխտան յԱզգային Պատրիարքարան, եւ այս գնացից շարունակութեան ծայրը ու՛ր հասնիլը խելք տեղ չընէր, զի ընտանեկան պատկառանքն, ամօթխածութիւնն, հանդէպ միմեանց ունենալիք բարեմիտ ներդաշնակութիւնն հետըզհետէ կը խաթարի ի պատճառս ուսեալ ընթացաւարտից, խմբագրապետաց եւ ձայնակցող մերս ուսեալ կենաց բանին քարոզիչ կարգեալ վարդապետաց . . . : Այո՛, սուրբ Հայր, այս չարիքը դարմանող մի ընդհանրական կրնայ տալ բառին բուն նշանակութեամբը Կենաց Բանին քարոզ հանդիսացած հրապարակագիր մը, որ պիտի է Չերզ սըրբութիւն միջոցաւ «Եկեղեցի Հայաստանեայց» պատուական պարբերականին: — Ստուգութեամբ կ'ըսեմ, Ս, Հայր, եթէ վերոյիշեալ եւ նման առնչակից կրօնական խնդրոց մասին ըստ վարդապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ պարբերաբար եւ պատե՛հ առթիւ բացատրութիւններ գրէք, բաւականին չփոթած մտաց շինութեամբ մեկենաս մը պիտի հանդիսանաք: — Այսչափը պարբերականիդ վերայարոյց լրոյն համար:

Համբուրիւ Ս. Ա. Չոյզ,

Մնամ, մեծաւ յարգանօք,

Որդի Չերի Գրիստոս,

Կ. Պոլիս 5 Ապ. 1900

ԳՐԻԳՈՐ Թ. ՍԱՐԵԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՏԱՆԱԽՈՐԲ

ՀԱՌԱՔԵԱՅ ԱՐԺ . ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Վ . ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

Գիր անցընես միշտ կը մընայ ,  
 Գիր չ'անչընես , ու՞ր կը մընայ .  
 Կիրքըդ վառուած բան մի՛ գըրեր ,  
 Կիրքըդ կ'անցնի , գիրդ կը մընայ :

Բարկասըրտին ի՞նչ անեմ , խիկար ,  
 — Կամ ասածին պատասխան մի՛ տար ,  
 Կամ ուզես , տու՛ր , բայց խոնարհաբար .  
 Լաւը թէ կուզես , մօտը մի՛ կենար :

Օրըն արեւծագէն ,  
 Տըղան փոքըր հասակէն ,  
 Փորձ մարդիկ ամէն բանը ,  
 Առաջուց կը գուշակեն :

Գառը քերթել թէ չես գիտեր ,  
 Միսը մորթին հետ կը ջարդես .  
 Մարդը կըրթել թէ չես գիտեր ,  
 Հոգւով մարմնով կը կորսընես :

Գըլուխը մեծ՝ մէջը դատարկ ,  
 Նա չիմանար , դու զա՛րկ ու զա՛րկ .  
 Թէ իմանայ ալ չի սովորի ,  
 Թէ եւ սովորի , մարդ չի լինի :

Չորս բան գուլեց խիկարը ,  
 Արհամարհեց յիմարը .  
 — Գողութենէ գողնալը ,  
 Խաղն անխռով խաղալը ,  
 Ջըրի մէջ լաւ լողալը ,  
 Ճանչնալն իրեն սըխալը :

Ուզած մարդը կը բարձրացնէ ,  
 Գըլխուն համար կ'անէ թազ .  
 Չուզած մարդը կը ցածցընէ ,  
 Ջարնէ կ'առնու ոտից տակ :

Թէ չես ուզեր կովը գըթուի ,  
 Շատ մի՛ կանչեր հօհօ՛ , հօհօ՛ .  
 Թէ չես ուզեր տըղան գըթուի ,  
 Չասե՛ս ամէն խօսքին Այո՛ :

Թէ քու տրդան քառասուն օր ,  
 Խենթ ու խելառ անուանես .  
 Քառասունմէկին՝ իրա՛ւ որ ,  
 Եկեօքը խենթ կը գըտնես :

Ինչ կ'անես , արա՛ , ո՛րդի ,  
 Չար ընկերի հետ մի՛ մընար ,  
 Ինչ կանես , արա՛ , ո՛րդի ,  
 Լաւ ընկերէ յետ մի՛ մընար :

Յառաջ մըտածէ՛ , ու յետոյ խօսէ՛ ,  
 Փողըդ լաւ համրէ՛ , ու յետոյ մըսխէ՛ .  
 Չուր չէ , որ կ'ասես , եղբա՛յր ,  
 Բիւր անգամ չափէ , մի անգամ կըտրէ՛ :

Աչքըդ բա՛ց , որ չը բանան ,  
 Աջըդ բա՛ց , որ չը բանան .  
 Բերնի դուռը ծանրը բաց ,  
 Որ սըրտիդ գանձը չը գողնան :

Ես լուսին եմ տեսած , եղբա՛յր ,  
 Աստղին լուսին չեմ ասեր .  
 Ես ուղիղն եմ տեսած , եղբա՛յր ,  
 Ծուռին ուղիղ չեմ ասեր :

Ասածըդ գիտցի՛ր ,  
 Առածըդ գիտցի՛ր .  
 Արածըդ գիտցի՛ր ,  
 Գըրածըդ գիտցի՛ր ,

Մեծ գործերու ձեռք զարնողը՛ ,  
 Դըժուարութենէ չը վախնար .  
 Մինարէն գողնալ ուզողը ,  
 Պատեան պատրատել չը մոռնար :

Խորհուրդ հարցու՛ր սորա նորա ,  
 Լըսածըդ լաւ դի՛ր կըշիռ .  
 Թէ չը հաւնիս , գիտցածդ արա ,  
 Ձեռքդ է քու գործիդ վըճիռ :

Հարցընելով հարցընելով՝  
 Նա սար ու ձոր անցեր է .  
 Սա՛ ալ ես գիտեմ ասելով՝  
 Դաշտին մէջ մոլորեր է :

Բան սովրեհնալ եթէ կուզես ,  
 Չը գիտցածըդ պէտք է հարցնես .  
 Ամօթ մը չէ չը գիտնալը  
 Ամօթ է չը սովրեհնալը :

Ղաւ է փոքր ինչ հեռի դընաս ,  
 Չոր ոտքով անցնիս կամըրջէն .  
 Քան թէ մօտի ջուրը մըտնաս ,  
 Չազատիս յայտնի վըտանդէն :

Սւրբիչի չըւնով թէ իջնես հորը ,  
 Կէս ճանքան չեկած՝ անկանիս խորը .  
 Օտարի խօսքով գործի ձեռք զարնես ,  
 Գործը կէս չարած՝ փընաւուես նորը :

Հազար լըսէ , մէկ խօսէ՛ ,  
 Տե՛ս դիմացինդ ի՛նչ կ'ասէ ,  
 Միայն լեզուին մի՛ նայիր ,  
 Հասկըցի՛ր միտքը ի՛նչ է :

Անբանին սանձէն՝  
 Բանականին լեզուէն  
 Կը բըռնեն մարդիկ , եղբա՛յր .  
 Ըզգուշացիր ծուռ խօսքէն :

Ո՛վ է բըռնողը  
 Սոխակըն սիրուն  
 Վանդակ դընողը ,  
 Լեզու՛ն է , լեզու՛ն :

Գլուխըդ պաղ պահիր ,  
 Ոտքերդ տաք պահիր ,  
 Փորդ միջակ պահիր ,  
 Բժըշկի կարօտ չես լինիր :

Թեթեւ լինի քո կերակուր ,  
 Վըրադ գըլուխըդ միշտ մաքուր .  
 Չը բարկանաս երբէք ի զուր ,  
 Տարիքդ երթայ մինչ ի հարիւր :

Գըլխումը խելք ունեցողը՝  
 Խելքը իրեն կը պահէ .  
 Գըլխումը խելք չունեցողը՝  
 Օտարի խելք կը ծախէ :

Տրգէտ ես ու խոնարհ եղա՛ր ,  
 Գիտունի չափ պատիւ ունիս .  
 Գիտուն ես ու հըպարտ եղա՛ր ,  
 Տրգէտին չափ պատիւ չունիս :

Մազըս ճերմակ է թէ սեւ ,  
 Քուրդը հարցուց սափրիչին .  
 — Թո՛ղ որ թափեմ քո առջեւ ,  
 Պարզ կ'երեւի քո աչքին :

Տըմարդին ո՞վ է խիկա՛ր ,  
 — Լաւ է չը ճանչնա՛ս , եղբա՛յր .  
 Դըգալով կըկերցընէ ,  
 Ու կոթովն աչք կը հանէ :

Թէ խօսիս , հաջէ՛ , կ'ասեն ,  
 Չը խօսիս , մարդ չէ՛ , կ'ասեն .  
 Որքան կ'ուզես , լաւ խօսէ՛ ,  
 Հա չեն ասիր , չէ՛ կ'ասեն :

Ոչ Շամին շաքարն ուտեմ ,  
 Ամա՛ն ե՛ղբայր , վազ անցայ .  
 Ոչ արապին երես տեսնեմ ,  
 Ամա՛ն ե՛ղբայր , զըզուեցայ :

Մի՛ լինիր ուրազի պէս ,  
 Միշտ դէպ ի քեզ , միշտ դէպ ի քեզ .  
 Հապա լեր սըղոցի պէս ,  
 Մէկ դէպ ի քեզ , մէկ դէպ ի մեզ :

Ում սայլովն որ կը քալէ ,  
 Նորա խաղովը կը չալէ .  
 Վա՛յ ան , որ մարդու խաթրին՝  
 Հաւատն օրէնքը կը ծալլէ :

Մածունը սեւ է ասեն՝ սեւ կասէ ,  
 Իմաստունը խեւ է ասեն՝ խեւ կ'ասէ .  
 Ամսուս քառսու՞նն է , — քառսու՞նն է .  
 Շողոքորթը ամէն խօսքի հա՛ կասէ :

Հարուստ մարդը օձ կերաւ ,  
 Ասին Աստուած ճա՛ր անէ .  
 Իեղճ անճարը օձ կերաւ ,  
 Ասին , շան պէս սոված է :

Լաւ է գովես բարձրացընես  
Թըշնամուտոյ մէկ լաւութիւնը ,  
Քան վատութեամբ շողոքորթես  
Բարեկամիդ մոլութիւնը :

Շիտակ քալէ , ո՛վ եղբա՛յր ,  
Տես որ ոտքըդ չը սահի .  
Թէ սահեցար ու ընկար ,  
Կըլլան զարնող զարնողի :

Մօրուքին նայիս՝  
Իսկ հայր Աբրահա՛մ .  
Աբարքին նայիս՝  
Սեմ չէ՛ հապա Քա՛մ :

Ախ ժամանա՛կ , ժամանա՛կ ,  
Այս ի՞նչ օրերու հասանք .  
Նըժոյգները յարդ կ'ուտէն ,  
Գարին կուտէ աւանակ :

Դու՞ն ես որ կը պարծենաս  
Թէ չունիմ պակասութիւն .  
Հայ՛լին ձեռք ա՛ռ , կը տեսնաս ,  
Կուտաս այլոց թողութիւն :

Ոչ սանձ ու զարդ ոսկեղէն  
Անպիտան ձին լաւ կ'ընեն ,  
Ոչ գեղեցիկ դէմք ու զգեստ  
Անմիտ մարդուն են գովեստ :

Ցորչափ բաղդը կ'ըլլայ քեզի բարեկամ .  
Բարեկամներ քո բոլորտիք ման կուգան .  
Զըւարթ օրերդ տըխուր ամպեր պատեցի՞ն ,  
Աջ ձախ նայէ՛ , մընացեր ես առանձին :

Ըզգոյշ լեր քաղցըր խօսքերէն՝ ,  
Որ չը խաբուիս չար մարդերէն ,  
Փորձէ ծանի՛ր իւր գործքերէն ,  
Եւ ոչ քաղցր ու սուտ խօսքերէն :

Ազգերնիս մէ՛կ , լեզուներս մէ՛կ ,  
Հաւատքնիս մէ՛կ , հայրենիք մէ՛կ .  
Հայրերնիս մէ՛կ , փառքերնիս մէ՛կ ,  
Ի՞նչու՞ չ'ըլլայ սիրտերնիս մէկ :

Լոկ մարդ է նա՝ որ սըխալի,  
 Ձի անսըխալ մարդ չըկայ.  
 Այլ գեւ է նա՝ որ սըխալի,  
 Եւ սըխալին հաստատ կայ:

ուզէ՞ք լինել երջանիկ,  
 Երջանկութեան այս է գաղտնիք.  
 Ինչ վիճակի մէջ ալ լինիք:  
 Գոհ եղիք, Գոհ եղիք:

Մի՛ թըշուառին հաց զըլասցիս,  
 Յորժամ ի քէն հայցիցէ,  
 Գուցէ վաղիւ նովիմք զերծցիս  
 Յանձկութենէ ինչ մեծէ:

Մուլութեան դէմ ախտին անարգ,  
 Լաւ գիտնանք.  
 Մէկ հատիկ դեղ կայ եւ հընարք,  
 Աշխատանք:

Ով կամակար տայ եւ ներէ ընկերին,  
 Վարձըս անանց գանձէ՞ անձին իւր յերկին:

Երբէք թէ քեզ հասանէ վիշտ,  
 Յուշ ամ, զի այն չը մընայ միշտ:

Յառնէ՛ ոյր չիք ի դէմս ամօթ,  
 Փախի՛ր ի բաց, մի՛ գընար մօտ:

Մի՛ դու այլում պեղեր ըզգուք,  
 Ձի մի՛ ի նոյն անկցիս ընդ հուպ:

Իմաստութիւն զարդ է մանկանց,  
 Թէ գըսեր զայն, գըտցես եւ գանձ:

Լաւագունին անյաղ տենչ՝  
 Բառնայ եւ զլաւն առ ի մէնջ:

Երբեմն հերիք է մի փոքրիկ ծակ  
 Որ մի մեծ նաւ երթայ ծովի տակ:

Պէտք չեղած բաներ գընելով  
 Պէտքերն ալ կը ծախես շուտով:

Համբերող սիրտն ամէն լեզի  
 Անոյճ կ'ընէ նրման մեղրի:

Մի տար չարին յաջողութիւն,  
 Քեզի կ'ընէ նախ չարութիւն:

Մի՛ հաւատար գըրսուանց սուրբին ,  
Նայէ՛, ինչեր՛ սըրտէն կ'անցնին :

Դուն ուրիշին ինչ որ ընես ,  
: Ուրիշներէն զայն կը գըտնես :

Կեզծաւորներն եղի նըման  
Կ'ընեն , կ'ըլլան , երես կ'ելլան :

Դու չես գըթար կարօտ եղբօր ,  
Ո՛վ քեզ գըթայ խեղճութեանդ որ :

Քու բերանըդ քեզ չի գովէ՛ ,  
Թող ուրիշը քեզ մեծցընէ :

Թէ մանուկ ես սովըէ՛ մեծէն ,  
Մի՛ պարծենար թէ բան գիտեմ :

Մի՛ պարծիր սուտ մարմնոյդ վըրայ ,  
Նայէ՛ հոգիդ պայծառ ըլլայ :

Թէ չափէ գուրս զաւակդ սիրես ,  
Անչա՛հ կողիտ որդի կ'ընես :

Թէ որ վարքդ է առանց մեղքի ,  
Մահըդ կ'ըլլայ քաղցրութեամբ լի :

Մեծ լեռներուն ձիւնն ալ մեծ է ,  
Հարուստին ալ հոգը շատ է :

Թէ մըտածես այնպէս գործես ,  
Շատ վընասէ քեզ կազատես :

Մի պարծենար թէ ունիս գանձ ,  
Անշուշտ կ'երթայ , կը մընաս բաց :

Երբ ուրիշին կը հասնի չար ,  
Քեզ ալ կուգայ , շատ մի՛ խընդար :

Խոհեմ մարդը խելք կ'ըստանայ ,  
Երբ որ իրեն վընաս կուգայ :

Քործքը կ'ընէ մարդուն սիրուն ,  
Եւ ոչ տեսքին գեղեցկութիւն :

Ինչ որ ընես ծընողիդ գէմ ,  
Քու զաւակդ ալ կ'ընէ քու գէմ :

Իբրև Յանելուած Կրօնաբերքիս սարավերջի թուոյն կցեմք  
 ներկայ Հովուական Թուղթն որ անցեալ տարի իբրև առան-  
 ձին տեսակ հրատարակուեցաւ՝ նախնապէս Մանչեսթրի հայ  
 գաղթականութեան ուղղեալ եւ հետեւաբար սակաւաթիւ  
 օրինակ միայն սպագրուած էր: Նկատելով որ նոյն հրատա-  
 րակութիւն առ հասարակ ճայագոյք ամենայն հաւատացելոց  
 համար շահեկանութիւն ունի, եւ զայն կարողալ ցանկացող-  
 ների փափագն այլապէս չէինք կարող լցուցանել, քանի որ  
 առաջին մասնաւոր սպագրութիւնն սպառուած էր, յարմար  
 դատուեցաւ ներկայիս վերստին ի լոյս ընծայել յօգուտ ըն-  
 թերցատէր հաւատացեալ եղբարց:

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ

ԱՌ ՄԵՐԱԶՆԵԱՅՍ ԲՆԱԿԵԱԼՍ

Ի ՄԱՆՉԵՍՏՐ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՅՍ

ՉՈՐ ԱՌԱՔԵԱՅ

ԹՈՐՈՍ ԲԱԶԱՆԱՅ ՏԷՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ ԶՈՒՂԱՅԵՑԻ

ՅԱՄԻ ՓՐԿԶԱԿԱՆ, 1899

## ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ

ԱՌ ՀԱՐԱՉԱՏ ՈՐԴԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՐՔ ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱԻ Ս. ՊԱՌԻ ԵԿԵՂԵ-  
ՑԻՈՅՍ ՀԱՅՈՑ Ի ՄԱՆԶԷՍԹԻ

Սիրեցեալքդ իմ ի Քրիստոս ,

Ճիշդ երեք տարւով յառաջ , Քրիստոսի Համբարձման Տօնին՝ արժանացայ իմ առաջին Ս. Պատարիւն մատուցանել Հայաստանեայց եկեղեցւոյ ամենէն նուիրական Տաճարի մէջ — Ս. Էջմիածնի Իջման Սեղանի վերայ — ի ներկայութեան Ազգիս Վեհ . Հայրապետին եւ Մայր Աթոռոյ օրհնեալ Մխարանութեան :

Քոհուութեամբ կը յիշեմ այդ շնորհաբեր օրն , որ անմուռանալի պիտի մնայ ինձ մինչեւ ցվախճան կենաց իմոց , յորում առաջին անգամ կոչուեցայ իբրեւ հայր ժողովրդեան՝ սիրեցեալ հեռաւոր հօտիս մաղթանքներ ի յերկինս վերառաքել այն սուրբ վայրէն՝ ուր մեր Լուսաւորիչն իւր երկնաւոր օծումն ընկալաւ , եւ յաջորդեց Սրբազան Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի :

Երեք տարիներ անցան յորմէ հետէ դուք զիս ընտրեցիք իբրեւ ձեր հոգեւոր հովիւ . եւ մինչ մի ակնարկ կը ձգեմ այդ անցեալ ժամանակի վերայ . սիրտս ուրախութեամբ կը լցուի եւ ոչ այլ ինչ բայց եթէ խորին գոհունակութիւն կըզգամ :

Ձեր մէջ անցուցած նորընծայութեանս միջոցին շատ բաներ ուսայ . ի մանկութենէ ի վեր ուսումնասիրած Տեսական Աստուածաբանութեան Գործնական Տարերքը կը յուսամ թէ փոքր ի շատէ ուսումնասիրեցի . զաղթական ժողովուրդի բազմադիմի հոգեւոր պէտքերը ու նոցա մատակարարութեան եղանակն ըստ կարելւոյն իմացայ . եւ նոյն իսկ իմ անփորձութեան թերութիւններէն ստացայ օգտակար խորատ եւ զգուշութիւն առ ի յապայս :

Քոհանամ զԱստուծոյ ստացածս եռամեայ անգին փորձառութեան համար — թէ նորա համար որ բարի եւ հաճելի եղած է , եւ թէ նորա՝ որ տխուր եւ անհաճոյ : Գիտեմ որ ճանապարհս միշտ հարթ եւ ուղիղ եղած չէ . առապար

ու ժայռուտ անցքեր եւս ունեցած եմ . հոգեւորականին յատուկ դժուարութեանց հանդիպած եմ : Բայց այս ամենի համար դարձեալ փառք կը տամ Աստուծոյ , զի համոզուած եմ որ անհաճոյն նոյնքան իմ օգտի համար եղած է որքան հաճելին : Մի Հովիւ պէտք է միշտ պատրաստ գտնուի այն բազմատեսակ դժուարութեանց համար որ մի արօտական հօտի մէջ սովորաբար կը հանդիպին . այսօր խորխորատն , վաղը գայլն , միւս օր մի անհատ ոչխարի հօտէն թափառելն եւայլն ըստ բերման ժամանակի : Հոգեւորականն առանց դժուարութեանց կը նմանի ծոյլ եւ անգործ տանը նստող այն զինուորին որ պատերազմի դժուարութեանց մէջ մտած չէ եւ նոցա դէմ դնելու փորձը չունի :

Իմ սրտի գոհունակութեան մեծ գաղտնիքն իմ անցեալ կենաց մէջ , այլ առաւելապէս Քահանայական սուրբ աստիճանին արժանանալէս ի վեր , Աստուծոյ առաջնորդող մասն եղած է զոր հանապաղ կը տեսնեմ իմ առջեւ , որ կը խրախուսէ ի բարին , կը զգուշացնէ ի չարէն . այս աւուր վիշտն միւս օր միսթարութիւն կը բերէ հանդերձ փորձառութեամբ :

Կարծեմ Ձեզ եւս հետաքրքիր ու շահաւէտ լինելու է , սիրեցեալքդ իմ ի Տէր , այս սուրբ Տարեդարձին առթիւ փոքր ինչ խորհիլ այդ եռամեայ հոգեւոր փորձառութեան վերայ որ Ձերինէն անջատ չի կարող լինել . զննէնք նորա պարգեւեալ պտուղներն , եւ տեսնենք թէ դեռ ի՞նչեք պիտի պարգեւէ . մի համառօտ հաշուեկշիռ պատրաստենք եւ տեսնենք թէ մեր հոգեւոր հաշիւներ ի՞նչ վիճակի մէջ են :

### 1. ՔՐԻՍՏՈՍ , ՀԱՆԿԻՍ ՀՈԳԻՈՑ

Քրիստոս մի մեծ խնդիր լուծեց : Դարերէ հետէ մարդկային ազգն տարակուսանաց եւ մտաւանջութեան մէջ ընկղմեալ , սրտի ու հոգւոյ սիրտփանք ու հանգիստ կը փնտռէր , ներքին երջանկութեան հետամուտ էր . այլ իւր բոլոր ջանքով ու հնարքով հանդերձ այդ ցանկալի երջանկութենէն ու հանգիստէն հեռու կը գտնուէր : Աշխարհիս ամենատեսակ փառքեր ու ճոխութիւն , մարմնաւոր քաջութիւն եւ մտաց կորով , իմաստութիւն եւ ճարտարութիւն , հեթանոս ազգաց յուսահատ սիրտերին գոհունակութիւն չը կարողացան ընծայել . ոչ եւս իւրեանց կրօն — արարածոց եւ ձեռագործաց պաշտումն — կարող եղաւ գնոսա այդ նըպատակին հասցնել : Մի արէկոծ նաւու պէս անստուգութեան եւ մտային ու հոգեւոր արեաց մէջ կը տարուբերէին

մարդիկ, մինչև Տէրն մեր երկնային խաղաղ նաւահանս-  
գիստը ցոյց տալով կոչեց. «Եկայք առ իս ամենայն վաս-  
տակեալք եւ բռնաւորք եւ ես հանգուցից զձեզ: Առէք  
զլուծ իմ ի ձեզ եւ ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խո-  
նարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց: Զի  
լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի:»

Մարդկային ազգի դարաւոր երկմտութիւն այլ եւս փա-  
րատեցաւ. անլուծելի համարուած ամենածանր խնդիրն լու-  
ծուեցաւ անձնիւր մարդու համար որ իւր ականջները կը  
բանար Տէրունական ձայնին: Աշխարհիս պատմութեան մէջ  
չը լսուած ու չը տեսնուած ոգեւորութիւն մի եկաւ Քրիս-  
տոսի առջին աշակերտաց վերայ: Մինչև ցայն վայր  
երջանկութեան աղբիւր կարծուած նիւթական հարստու-  
թիւն ու մեծութիւն մէկ կողմ կը ձգէին մարդիկ եւ գուն-  
դագունդ կը դիմէին յերկնային նաւահանգիստն ուստի Աս-  
տուածային ձայնը կը դար, «եկայք առ իս, եւ գտջիք  
հանգիստ անձանց ձերոց:» Այս հանգիստը ձեռք բերելու  
համար որեւէ երկրաւոր գին սուղ չէր. այն երջանկութիւն  
ու հանգիստ զոր իւրեանք եւ իւրեանց նախնիք վայրապար  
փնտուած էին երկնից տարերց մէջ եւ չէին կրցած գտնել,  
այժմ անակնկալ ճոխութեամբ կը գտնեն ի Քրիստոս եւ  
նորա սուրբ Աւետարանի մէջ: Իւրեանց սիրելիներէն եւ  
ազգականներէն բաժանուիլ, իւրեանց մարմնաւոր նիւթեղէն  
գոյքերէն զրկուիլ, չարչարանաց եւ նեղութեանց ենթար-  
կուիլ, եւ մինչև իսկ իւրեանց մարմնաւոր կեանքը զոհել  
ի սէր այդ ճշմարտութեան՝ մի ջնչին այլ քաղցրիկ պար-  
տականութիւն կը համարէին:

Կը կարդանք ի Գործս Առաքելոց թէ երբ առաջին ան-  
գամ Առաքեալք բանտարկուեցան եւ ապա գանահար լինե-  
լով արձակուեցան, «Նոքա գնացին խնդալով յերեսաց  
ատենին, զի վասն անուանն (Յիսուսի) արժանի եղեն ա-  
նարգելոյ:» Պաւղոս Առաքեալ առ Կորնթացիս գրեալ եր-  
կրորդ թղթոյն մէջ իւր կրած նեղութիւններն ու հալա-  
ծանքներ ի սէր Քրիստոսի, կը թուէ մի ըստ միողէ ինչպէս  
մի զօրապետ պարծանօք կը թուէ իւր յաղթութեան  
նշաններն ու մեղալներ, եւ ի վերջոյ կ'ասէ, «Վասն որոյ  
հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս,  
եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի:»

## 2. ՀԱՅՍՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԵՐ ԱԶԳԻ

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳԱԻԻԹՆ

Ինչ որ մեր ազգին եւ մասնաւորապէս սիրելի ժողովրդեանս կը վերաբերի, Հայաստանեայց եկեղեցին է այն միջոցն որով հաճեցաւ Աստուած վերոյիշեալ երանաւէտ հանգիստն եւ յաւիտենական փրկութիւն ընձեռել մեզ. Գրիստոսի Սուրբ Աւետարանի լուսով մեր միտքեր ու հոգիներ լուսաւորել: Արդարեւ Հայաստանեայց եկեղեցին երբէք չի դատապարտեր իւր սահմանէն դուրս գտնուող քրիստոնեաներն, եւ ինքզինքն միմիայն փրկութեան միջոց չի հռչակեր, վասն զի իւր հասարակաց պաշտամանց մէջ նա միշտ կ'աղօթէ վասն այնոցիկ, եւ նոցա բարեխօսութիւնը կը հայցէ, որք «Յարեւելից մինչեւ ի մուսս արեւու կարգան զանուն Տեառն սրբութեամբ»: Մէկ խօսքով աշխարհիս այլեւայլ երկրաց մէջ գտնուող եւ առաքելական աւանդութիւն ունեցող բոլոր ազգային եկեղեցեաց հետեւողք կարեն նոյնքան բարձր քրիստոնեայք լինիլ եւ երկնից արքայութեան արժանանալ որքան մի հայ:

Սակայն քանի որ Աստուած մեր ազգին առանձին սիրով մի ինքնուրոյն եկեղեցի շնորհած է, որ անկախ սկզբնաւորութեան հրաշալի պարագայիւք եւ փառաւոր աւանդութեամբ շրջապատեալ է, կը հետեւի թէ Աստուծոյ անյիղի կամքն է որ ամեն Հայ այդ սուրբ Փարսիսի ներքոյ պատապարուի, եւ միայն այդ սուրբ հաստատութեան մէջ փնտոէ եւ գտնէ իւր փրկութիւն: Որքան սխալ է եւ մեր եկեղեցւոյ ոգւոյն հակառակ այն դադափար թէ «Արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն» ընդհանուր առմամբ. այսինքն, նոյն իսկ այն օտարազգեաց համար որք ի ծննդենէ կ'աթուղիկէ եկեղեցւոյ մի ուրիշ ազգային ճիւղի հպատակ եղած են. սակայն եւ այնպէս ուղիղ եւ նախընթաց բացատրութեան համաձայն է թէ «Մի հայու համար արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն»: »

Ս. Առաքեալն Պետրոս Փոքր Ասիոյ նորահաստատ եկեղեցեաց շրջաբերական թուղթ ուղղելով՝ կ'ասէ. «Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեփական: » Ինչպէս այն ժամանակի քրիստոնեայ հասարակութիւն, նոյնպէս եւ ներկայ դարու իւրաքանչիւր տոհմային եկեղեցի մի «սուրբ ազգ» կը կազ-

մի, եւ ուղղակի իւր երկնային Փեսային հետ միանալով՝ միացած կը լինի նաեւ միւս քոյր եկեղեցեաց հետ, եւ թէպէտ մարդկային զառածեալ բնութիւն առ այժմ արգելու արտաքին միութիւն, այլ ներքին միութիւնը կատարեալ է ի ձեռն երկնաւոր Հօտապետին մերոյ, որ իւր ամենակալ Աջովը կը պահպանէ արեամբ իւրով գնեալ իւր սուրբ Եկեղեցին:

Ուրեմն շնորհիւ սուրբ Աւետարանին « ընտիր սուրբ ազգ » մի եւք, այսինքն, առաւել քան թէ մի սոսկ աշխարհային կամ տոհմային ազգ. եւ Հայաստանեայց Եկեղեցին հայոց համար մի հոգեւոր ազգութիւն է որ, ոչ թէ միայն Աւետարանի քարոզութեան առաջին օրէն ի վեր մեր ազգին երկնից արքայութեան առաջնորդ եղած է, այլ նաեւ դարերէ հետէ տոհմային ազգութեան պաշտօն կատարած է. մայրական կաթոգին սիրով իւր զաւակաց դարաւոր արտասուքն սրբած է եւ դեռ կը սրբէ:

### Յ. Ա.ԻՏԱՐԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ, ՄԷՐ ԱՌԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՌԸՆԿԵՐՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ այս մեծ լուսաւորութիւն հիմնեալ է Ս. Աւետարանի վերայ որոյ բովանդակութիւնն է. « Սիրեցես զՏէր Աստուած քո, Սիրեցես զընկեր քո: » Բոլոր քրիստոնեայ վարդապետաց քարոզութիւնք եւ մինչեւ իսկ փիլիսոփայից գրուածներ, ըստ Աստուածաշունչ Ս. Գրոց, ոչ այլ ինչ բայց երե սիրոյ այս պարզ քարոզը կը կարգան ուղղակի կամ անուղղակի կերպիւ, այլեւայլ ձեւերով եւ օրինակներով: Այս էր պատճառն որ մեր Փրկիչ որեւէ դժուարութիւն չունեցաւ Երուսաղեմի ամենէն անարգ ու ոամիկ ժողովրդեան քարոզելու. Իսրայէլեան գեղջուկ խուժանն, քաղաքէն արտաքսեալ եւ ժողովուրդէն արհամարհեալ բորոտներ եւ մուրացկաններ, նոյնքան դիւրաւ կը հասկանային այդ պարզ վարդապետութիւն որքան Հրէից բարունապետք, դպիրք եւ փարիսեցիք: Այժմ զկնի հազար ինն հարիւր ամաց, նոյն Փրկչական ձայնն է որ մեզ հետ կը խօսի, եւ նոյն պարզ պատգամը կ'աւետէ, ամեն մարդու լսելի եւ հասկանալի: Ամենէն խոնարհ կարծուած քրիստոնեայն նոյնքան գիտէ այս սիրոյ Աւետարան՝ որքան մեծամեծ աստուածաբան վարդապետներ եւ բարձրաստիճան պաշտօնեայք եկեղեցւոյ:

Ուրեմն այլ եւս ի՞նչ պէ՞տք խորիմաստ բաների մէջ

մտնել . կը բաւէ որ մինք եւս մեր ներկայ խորհրդածու-  
թիւնք այս Տէրունական հին շաւիղովը կատարենք . նախ  
քան զՔրիստոս , սիրոյ այն կատարեալ եւ ընդհանուր գա-  
ղափարն զոր Նա աւանդեց՝ անձանօթ էր մարդկային ազ-  
գին . Նա ինքն կապ եւ միջնորդ էր ի մէջ Աստուծոյ եւ  
մարդկան . — Աստուած մարդացաւ , որպէս զի մարդիկ բարձ-  
րանան առ Աստուած , որպէս զի մարդիկ աշխատին աստ-  
ուածային կատարելութեան հասանիլ . երկնային սիրով սի-  
րեն զԱստուած եւ զընկեր . զի կատարեալ ընկերսիրու-  
թիւն չկայ առանց Աստուածսիրութեան , ոչ եւս Աստուած-  
սիրութիւն կարելի է երեւակայել առանց ընկերսիրութեան :  
« Եթէ ոք ասիցէ եթէ՝ Սիրեմ զԱստուած , եւ զեղբայր իւր  
ատիցէ , սուտ է . որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսնէ ,  
զԱստուած զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել : » —  
Ուրեմն քննենք նախ այն կէտեր որ քրիստոնեայ ժո-  
ղովրդեան աստուածսիրութեան պարտուց կը պատկանին  
եւ ապա զայնս որ ընկերսիրութեան կը վերաբերին :

#### 4 . ԱՂՕԹՔ

Ս. Պատարագի միջոցին Հայր մերէն յառաջ , քահա-  
նայն լուելեայն կ'աղօթէ . « Աստուած ճշմարտութեան եւ  
Հայր ողորմութեան , գոհանամք զքէն որ ի վեր քան զե-  
րանելի նահապետացն , զմեր պարտաւորելոցս մեծարեցեր  
զքնութիւն . վասն զի նոցա Աստուած կոչեցար , իսկ մեզ  
Հայր հանեցար անուանիլ զքաշով » : Նախ քան զգալուստն  
Քրիստոսի , մարդիկ յԱստուծոյ կ'երկնչէին , կը սոսկային ,  
իսկ Քրիստոս առաջին անգամ պատուիրեց մեզ սիրել զՆա ,  
եւ մտերմական սիրով սիրել զնա իբրեւ ծնօղ , իբրեւ հայր .  
զի մարմնաւոր ծնօղէ եւս աւելի կը սիրէ եւ կը խնամարկէ  
զմեզ . եւ ի վերջին աւուրս վասն Միածնի Որդւոյն իւրոյ  
« Հայր հանեցար անուանիլ զքաշով » : Մենք եւս մեր որդիա-  
կան սէրն առ Աստուած կ'արտայայտենք , ըստ օրինակի եւ  
պատուիրանի Տեառն , աղօթելով առ Նա եւ Նորա հրա-  
մանները պահելով :

Աղօթքն է այն միջոցն որով մեր միաքեր ու հոգիներ  
կը բարձրացնենք առ Աստուած , մեր որդիական յարգանքը  
կը մատուցանենք Նմա եւ Նորա հայրական գոռանք եւ  
մխիթարութիւն կը վայելինք : Նա որ մեզ պատուիրեց  
« Յամենայն ժամ յաղօթս կացէք , » ինքնին « Հանէր զգիշերն  
ի զլուս յաղօթան Աստուծոյ : » Նոյնպէս կը կարգանք որ

յաճախ իւր աշակերտներով հանդերձ հրէական տաճարի պաշտամանց եւ տոնակատարութեանց կը մասնակցէր :

Քրիստոնէական եկեղեցւոյ կենաց պայմանն է Աղօթքն . եկեղեցւոյ արեան շրջանն է, կենդանութեան հաւաստիքն է . առանց աղօթքի եկեղեցի, քրիստոնէութիւն եւ Աւետարան չոր փայտի եւ անկենդան դիակներու կընմանին : Մի եկեղեցւոյ ոյժ ու զօրութիւն մը այն յայնժամ յերեւան կըզայ, երբ նորա զաւակունք աստուածամերձ եւ աստուածախօս ժողովուրդ լինին . աբտաքոյ պարագայներ ոչինչ են . մի դիակի զարդարանք ու պաճուճանք են :

### 5. ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹՔ

Աղօթքն երկու տեսակ է . առանձնական եւ հասարակաց : Կան ումանք որք իւրեանց քրիստոնէական պարտք լիովին կատարած կը համարին երբեմնապէս եկեղեցի գնալով եւ հասարակաց աղօթից ներկայ գտնուելով : Իսկ այլք այսօրմանն եւս չեն աներ եւ կ'առարկին . «Մի թէ աղօթելու համար պէ՞տք է անպատճառ եկեղեցի երթալ եւ այլն» . բայց եւ ոչ իսկ առանձին կ'աղօթեն : Հասարակաց աղօթից ձյմարիտ սիրողն չի կարող առանձնական աղօթից սիրող չը լինել . ոչ եւս առանձնական աղօթից սիրողը կարող է երջանիկ լինել առանց հասարակաց աղօթից մասնակցելու :

### 6. ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ

Առանձնական աղօթքն այն է՝ երբ կ'առանձնանամք մեր խուցն կամ նոյն իսկ եկեղեցին, ժամերգութենէ յառաջ կամ յետ, եւ մեր սրտի զգացումներն կը յայտնեմք Աստուծոյ . մեր ընկալեալ շնորհաց եւ ողորմութեան համար փառք կը տանք, մեր պէտքեր, մեր ցաւեր ու վշտեր կը յայտնենք, մեր գործած մեղքեր կը խոստովանիմք առաջի Աստուծոյ եւ թողութիւն կը խնդրեմք . աստուածային պատուիրանաց վերայ կը խոկամք, Ս. Գիրքը կը կարդամք եւ այլ այսպիսի կըրթութիւններով առանձնաբար Աստուծոյ կը մօտենամք եւ նորա հետ կը մընանամք :

Գալ գիտեմ որ մեր մէջ շատեր կան որ առանձնական աղօթքի պէտքը կըզգան, այլ ընտանեկան այլ եւ այլ անյարմարութեանց պատճառաւ չեն կարող գործադրել : Ուստի մի քանի գործնական առաջարկութիւնք աւելորդ չեմ համարիր : — Ընտանիք չունեցող անհատ մի որ իւր բնակարանին մէջ բոլորովին անկախ է ուրիշէ, կարող է

իւր ժամանակն իւր ուզածին պէս կարգադրել . աղօթել եւ իւր բարեպաշտական կրթութիւններ կատարել ե՛րբ, եւ իւր տան կամ բնակարանի ո՛ր անկիւնի մէջ , որ ինքն յարմար դատի : Այսպիսւոյն միայն առաջադրութիւն եւ հաստատամտութիւն պէտք է : Իսկ ընտանեաց մէջ , ուր այլ եւ այլ անձինք միասին կ'ապրին մէկ յարկի ներքոյ , մի բիշ գծուարին է . մանաւանդ աղօթքի տեղը , դիրքը եւ մինչեւ իսկ առարկայն որոշելու համար : Բայց այս բոլոր գըծուարութիւններ կը փարատուին , երբ ընտանեաց գլուխներ , հայր եւ մայր , բարի օրինակաւ եւ ծնողական իշխանութեամբ հարկ եղածը կարգադրեն : Ոմանք կարող են մի սենեակ յատկացնել այս նպատակին . կամ ո՛ր եւ է մի սենեակ առաւօտ եւ երեկոյ այս ինչ ժամերուն իբրեւ ընտանեկան եւ առանձնական աղօթատեղի յատկացնել եւ այնտեղ լուծիւն պահել : Ե՛ւ այս եւս գծուար թուի , գոնէ առաւօտներն երբ համայն ընտանիք նախաճաշի կը հաւաքուի , նախապէս հինգ տասը վայրկեան մեր Եկեղեցւոյ Աղօթագրքէն առաւօտեան գոհաբանութիւն մատուցանել , եւ նոյնպէս երեկոյեան՝ գիշերային հանգստութեան համար իրարմէ բաժնուելէ յառաջ նոյնը կատարել , համառօտ խրատականաւ կամ Ս. Կրօնք ընթերցուածով հանդերձ :

Հայրի՛կ կամ մայրի՛կ , ի զուր ժամանակ կը վատնեն՝ զաւակիդ Հայր մեր կամ ուրիշ աղօթք կը սորվեցնես , երբ դու ինքդ նորա մօտ չես չոգեր կամ ձեռնամած կայներ եւ աղօթեր . երբ դու նորա ներկայութեան Աստուծոյ հետ չես խօսիր իբրեւ դէմ յանդիման : Կրօն սորված աղօթքն զաւակիդ համար մի ձանձրացուցիչ դաս է , քանի որ նորա իրական գործածութիւն չը գիտէ : Քո պարտքն է ժամանակ առ ժամանակ զաւակացդ հետ Աստուծոյ եւ իւր Ս. Եկեղեցւոյ վերայ խօսիլ . նորա յայտնութեան պատգամներն բացատրել նոցա . նորա սրբոց կեանքն ու վարքը պատմել եւ բարի օրինակներով տպաւորել ի նոսա սիրոյ Աւետարանն : Եթէ մինչ ցարդ քո այդ ծնողական պարտքն սկսած չես , հիմա սկսիր , դեռ ուշ չէ :

## 7. ԱՌԱՆՁՆԱԿԱԿ ԱՂՕԹՔԻ ՆԻԻԹՆ ԵՒ ՁԵԻՆ

Առանձնական աղօթից ձեւը լինելու է նախ եւ յառաջ , ինչպէս վերը գիտեցի , մեր սրտի զգացմանց արտայայտութիւն պարզ ոճով եւ մեզ 'ասկանալի լեզուաւ , լինի այդ աշխարհաբառ կամ գրաբառ : Բայց Հայաս-

տաննեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակունք պարտին յարգել մեր Եկեղեցւոյ պաշտօնական Աղօթագիրքն, եւ նորա ճոխութենէն օգտուիլ: Այդ գրեթէ Աստուածաշունչ աղօթքներ որ յենթացս դարուց մեր ընտրեալ սրբոց եւ հայրապետաց բերաններով սրբագործուած են, կրպարունակեն մարդկային ամենատնտակ զգացմանց մաղթանքներ, եւ Աստուծոյ հետ խօսելու առարկայներ ու ձեւեր: Ուստի յոյժ ցանկալի է որ Եկեղեցւոյ մանկունքս այդ աղօթից հետ ընտելանամք, որպէս զի մեր առանձնական աղօթքն եւս սերտիւ կապուած լինի հասարակաց աղօթից հետ: Այսու հանդերձ եթէ մէկն այդ աղօթքները հասկանալու չափ գրաբառ չը գիտէ, լաւ է որ այդպէսն աշխարհաբառ կամ իւր հասկանալի լեզուաւ աղօթէ քան թէ գրաբառ աղօթքներ արտասանէ առանց միտքը հասկանալու: Առ այս Չերմապէս կը յանձնարարեմ Կեր. Տէր Յովհաննէս Մկրեան Աւագ քահանայի հրատարակեալ ժամագիրք — Աղօթագիրքն որ իւր զիւրատար դիրքով մի հայ քրիստոնէի բոլոր պահանջները կը գոհացնէ. եւ միակ ու առաջին փորձն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքը թէ՛ գրաբարագէտին եւ թէ՛ սոսկ աշխարհաբառ հասկացողին զիւրամատչելի առնելու:

Բարեպաշտ քրիստոնեայն պէտք է նաեւ կարող լինի երբեմն ինքզինքն աղօթագիրքէ ազատ կացուցանել, իւր միտքն պարզապէս իւր Արարչին յայտնելով՝ իւր սրտի ու մտաց եւ ժամանակի թելադրութեամբն: Անգիր աղօթելու չափ կարեւոր եւ երբեմն դեռ աւելի կարեւոր է՝ մեր Եկեղեցւոյ աղօթից առօրեայ գործածուածներէն մի քանիսն — ինչպէս Գոհաստալ գրեմ, Լուր ձայնից մերոց, Օրհնեալ Տէր որ բնակեալդ եւայլն, բոլորովին գոց սերտել, որպէս զի կարենամք ի ստիպել հարկին անգիր արտասանել՝ իւրաքանչիւր բառի վերայ խորհելով իբր թէ մեր իսկ բառեր լինէին:

Չարմանալի է թէ այս հին աղօթքներ ի՛նչքան բազմադիմի եւ բաղադրեալ խորհուրդներ յառաջ կը բերեն, երբ անգիր այլ ծանր ուշադրութեամբ կ'արտասանուին: Ի մանկական հասակի անգիր սովորած էի Ս. Ներսէս Շնորհաւրւոյ անմահական յիշատակ Հաւասով խոստովանիլ քսանեւորս տուն աղօթքն: Իմ կենաց ամենէն անմխիթար ժամերուն մէջ, երբ աչաց ցաւի պատճառաւ կարգալն անհնարին դարձած էր, եւ հիւանդութիւնը մարմինս ու միտքս

այն աստիճան տկարացուցեր էր որ մի նոր բան մտածելն՝ ինձ մի ծանր բեռ կրթուէր, իմ այդ անմխիթար դրութեան մէջ մխիթարութիւն պարգեւողն Հաւասոյ խոստովանիւ աղօթքն էր. նորա իւրաքանչիւր տուն, առանց դժուարութեան, բազմապատիկ գեղեցիկ եւ մխիթարական խորհուրդներ կը բերէր ինձ. իւրաքանչիւր տուն ինձ համար, այդ թշուառ օրերուն մէջ. յոյժ դուարձացուցիչ եւ հետաքրքիր մի մատեան էր: — Ութ ինն տարիներ յառաջ մահուան անկողնոյ մէջ տառապող մի ծերունի եւ աստուածասէր վարդապետի մօտ կեցած էի յ Ս. Երուսաղէմ: Մահուան հրեշտակն արդէն եկած էր իւր աւանդն առնել տանիլ. բժիշկներ յոյսերնին կտրած մեկնած էին. մահուան քրքատինքը կընոսէր, ոչ մարմնոյ եւ ոչ մտաց կարողութիւն մնացած էր հիւանդի վերայ: Սակայն հիւանդութեան բուր ծանրութիւնը չէր կրցած ջնջել այդ սուրբ մարդու յիշողութենէն այն աղօթքն որ իւր ամբողջ կենաց մէջ հոգեւոր որոճման նիւթ մատակարարած էր: Հաւասոյ խոստովանիւր սկսաւ, եւ մեղմ ու շնչահաս ձայնիւ անվրէպ արտասանից մինչեւ վերջն: Յուզիչ էր հոգեվարք վարդապետի ոգեւորութիւն երբ իւր երկրաւոր կենաց վերջին վայրկենին աշխարհէս ի բոլոր սրտէ հրաժեշտ առնելով՝ կ'արտասանէր. « Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ղ հոգի իմ ուրախութեամբ տեսնել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրս եւ հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո: »

### 8. ՀԱՍՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹՔ

Առանձնական աղօթից համար ասածիս մեծագոյն մասը կը վերաբերի նաեւ Հասարակաց աղօթից: Աղօթելու հոգին մի է եւ զգացումն նոյն լինելու է տանդ առանձնութեան մէջ, ինչպէս ի պաշտօն Բարձրելոյն նուիրեալ տաճարի մէջ. ամենատեսն Աստուած ամենուրեք ներկայ է եւ ամենուրեք կըլսէ մեր աղօթքն: Սակայն Հասարակաց աղօթքն այն համերաշխութիւնը ցոյց կըտայ որ պիտի տիրէ քրիստոնեայ հասարակութեան այլեւայլ անդամոց մէջ, երբ ամէնքը կը հաւաքուին մի առանձին նուիրագործեալ յարկի ներքոյ եւ միարան ու միանուագ կը ներկայացնեն իւրեանց մաղթանքն. ուր մեր Ս. Կրօնի գլխաւոր խորհուրդները կը կատարուին եւ Ս. Աւետարանը հանդիսաւոր կերպիւ կը կարգացուի ու կը քարոզուի:

Շատ ուրեք հայ ժողովուրդը, կամ աւելի լաւ, անհատ

հայեր, սովրած են եկեղեցին լոկ իբրև առանձնական աղօթատեղի գործածել: Երբեմն եկեղեցի կ'երթան առանց կատարուած պաշտամանց շատ ուշադրութիւն դարձնելու, այլ իւրեանց համար առանձին կաղօթեն, Սաղմոս կամ մի ուրիշ աղօթագիրք կրկարդան: Երբեմն այսքանն եւս չեն աներ, այլ պարզապէս եկեղեցի կ'երթան ժամ կամ Պատարագ մտիկ ընելու, որ շատ քիչ բան կընշանակէ: Քահանայք եւ դպիրք ժողովրդեան աղօթից առաջնորդ են, եւ ամեն քրիստոնեայ պէտք է իւր ժամադիրքը այնքան լաւ ուսումնասիրած լինի որ կարենայ ամենայն դիւրութեամբ մասնակցիլ հրբեմն լռութեամբ, ինչպէս քահանայի արտասանած աղօթքներ, եւ երբեմն եւս իրապէս արտասանելով եւ երգելով, ինչպէս Սաղմոսներն, Հաւատամքն եւ դպրաց բոլոր երգեցմունք: Եկեղեցի յաճախող իւրաքանչիւր անհատ քրիստոնեայ պէտք է համոզուած լինի, որ ինքն եկեղեցի կ'երթայ ոչ որպէս զի այս ինչ նշանաւոր երգեցողի ձայնը լսէ, կամ այն ինչ մեծ հանդիսին ակահատես լինի, եւ կամ այս ինչ քարոզչին ունկնդիր լինելով իւր հետաքրքրութիւնը յագեցնէ. այլ որպէս զի իւր ձայնը լսելի աննէ առաջի Աստուծոյ, եւ ինքն իւրովսանն հանդիսադիր լինի աստուածային հանդիսին: Այսու հանդերձ Աստուծոյ տան մեծվայելչութիւնն երբէք մոռնալու չէ. եւ եղանակ չը գիտցողն ու անախորժ ձայն ունեցողն աւելի լաւ կ'անէ լռութեամբ, հետեւիլ այլոց, քան թէ հաւատացելոց բարեպաշտութիւնը խանգարել:

Եկեղեցւոյ սրբութիւնն եւ նոյն իսկ աշխարհային բարեկրթութիւնը կը պահանջէ որ եկեղեցի մտնողն ակնածութեամբ եւ պատկառանօք վարուի մի այնպիսի շէնքի մէջ որ մի սուրբ եւ աստուածային նպատակի նուիրագործեալ է: Աղօթքի որոշեալ ժամէն շատ ուշ մտնել եկեղեցի, կամ ամենէն խորհրդաւոր պահուն աղմուկով մեկնիլ, դռներն անզգուշութեամբ իրար զարնել, անխնայ քայլելով կոշիկների շաչիւնով ժողովրդի աղօթքը շփոթել, անտեղի խօսակցիլ, աստ անդ նայիլ, ծիծաղիլ, եւ այլն. այնպիսի թերութիւններ են որ հայ եկեղեցեաց մէջ շատ անգամ կը տեսնուին, այլ նոյն իսկ այդ յանցաւորներ մի թատրոնի կամ աշխարհական ժողովասրահի մէջ՝ աւելի զգուշութեամբ եւ պատկառանօք կը վարուին: Նոյնպէս սրբազան պաշտամանց միջոցին յատկացեալ ծէսերուն չը համակերպիլ ի մասին ծնրադրութեան, չողելու, կայնե-

լու, նստելու, ձեռքերը կցելու, երեսը խաչակնքելու, եւ այլ այսպիսի զանցառութիւններ թէ յանցաւորին լիաս ու արատ կը բերեն եւ թէ տեսնողին չար օրինակ կը լինին եւ գայթակղութիւն կը պատճառեն :

Թող չը կարծուի թէ սրբազան պաշտամանց մէջ արտաքին ձեւն եւ վայելչութիւնը նշանակութիւն չունին : Հոգեբանական օրինօք արտաքին ձեւն մեծ ազդեցութիւն ունի ներքին զգացմանց վերայ . եւ փորձուած իրողութիւն է որ շատ անգամ բարեպաշտական արտաքին ձեւը ներքին բարեպաշտութիւն յառաջ կը բերէ ուր որ չկայ, ինչպէս աշխարհի փորձառութեամբ գիտենք որ արտաքին քաղաքավարութիւնն բազում ուրեք յարգանաց եւ պատուոյ անկեղծ զգացում եւ սրտի ազնուութիւնը կը զարգացնէ :

Սրբազան պաշտամանց արտաքին վայելչութիւն մասնաւորապէս օտար երկրաց ու ժողովրդոց մէջ անհրաժեշտ է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Գրիստոսէական վեհութիւնը ներշնչելու մեր դրացեաց վերայ, որք փոխանակ օգտուելու եւ մեր բռնած ուղղութեան ճշմարտութեամբն համոզուելու, աւելի կը գայթակղին ի նախատինս մեր Ս. Եկեղեցւոյ եւ ազգային քաղաքակրթութեան . եւ այսպէս ըստ բանի Առաքելոյն, « Անունն Աստուծոյ հայհոյի վասն մեր ի մէջ հեթանոսաց : »

Ծ, ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հասարակաց ազօթից գլխաւոր եւ կեդրոնական մասն է Ս. Պատարագի խորհուրդն, որ իբրւամբ ամենէն ժողովրդական արարողութիւնը դարձած է : Սակայն սոյն խորհրդոյ վեհութեան սխալ ըմբռնումն մեր ազգի մէջ այլեւայլ զեղծումներ յառաջ բերած է : Ս. Պատարագի ազօթքներն ու կրգերն ուշի ուշով կարգացողն պիտի տեսնէ որ մեր Եկեղեցին իսկզբանէ անտի պահանջած է եւ ամէն կիրակի կը պահանջէ որ Ս. Պատարագի մասնակցողք, այսինքն, ներկայ գտնուողք անպատճառ հաղորդուին : Եթէ Ս. Պատարագն մեր Փրկչի վերջին Ընթրեաց միջոցին հաստատեալ խորհրդոյ եւ պատուիրանի կատարումն է . ուրիմն գիտենք որ երկոտասան Առաքեալք ամենեքին հաղորդուեցան այդ առաջին Ս. Պատարագէն . եւ եթէ Առաքելական դարու եւ նախկին Եկեղեցւոյ սովորութիւն քննենք, որոց ճշգրիտ աւանդութիւնը անփոփոխ պահած է մեր Ս. Պատարագի մատեանն, պիտի տեսնենք որ մեր

ժողովրդեան ներկայ թուլութիւն բոլորովին հակառակ է այդ աւանդութեան :

Այն դարու քրիստոնեայք յաճախակի կընադորդուէին ամենքը , ի բաց առեալ ապաշխարողները : Ինչպէս ի հնունմն , այսօր եւս անեղ կորսրդոյն նախապատրաստութիւնք կըկատարուին , ազօթքներ կ'արտասանուին , հաց եւ գինի կընուիրագործուին , եւ սարկաւազն կընրաւիրէ բարձր ձայնէւ . « Երկիւղիւ եւ հուատով յառաջ մատիք , եւ սրբութեամբ հաղորդեցարուք : » Սակայն այժմ , կը տեսնեմք շատ անգամ , որ պատարադիչ քահանայէն զատ , հաղորդուող չը կայ : Հակասութիւն է անշուշտ երբ ամենչպէս վերջը այդ չը հաղորդուող ժողովուրդը դարաց ձայնակցութեամբ կըսկսի երգել . « Լցաք ի բարութեանց քոց եւայլն » , որոյ աշխարհաբառ թարգմանութիւնն աստ գնել աւելորդ չեմ համարիր . « Քու բարիքներովդ լցուցանք , Տէր , քու Մարմինդ եւ Արինդ ճաշակելով . փա՛ռք ի բարձունս մեզ կերակրողիդ՝ որ միշտ կըկերակրես զմեզ . քու հոգեւոր օրհնութիւնդ մեր վերայ զրկէ . փառք ի բարձունս մեզ կերակրողիդ : » Եւ ապա նորէն կ'երգին . « Ծնորհակալ եմք քենէ , ո՛վ Տէր , որ կերակրեցիր զմեզ քու անմահական սեղանէդ , բաշխելով քու Մարմինդ ու Արիւնդ՝ աշխարհի փրկութիւն եւ մեր անձերուն կեանք ըլլալու համար : »

Երեւակայեցէք , մի աղնիւ բարեկամի հրուէյն ի ճաշ կ'ընդունինք , ամեն պատրաստութեամբ կըմտնենք ճաշասրահն , կընստինք դրդալներ ու պատառաքաղներ իրարու կըզարնենք , բայց ամենեւին չենք ուտեր : Եւ ի վերջոյ կ'ասենք . « Ծնորհակալ ենք , կերակուրներդ աղէկ էին , լաւ կերանք կըշտացանք եւայլն » : Հիմա , այս զեղծում մեր ազգի մէջ այնքան խորապէս արմատացած է որ յիմարութիւն կըլինէր որեւէ եկեղեցականի կողմէ ուզել մէկ հարուածով առաքելական սովորութիւնը վերահաստատել : Այսօր ամեն մեծ քաղաքի մէջ բազմաթիւ քրիստոնէի անուն կրող հայեր կան որք թէեւ յաճախ եկեղեցի կ'երթան , այլ շատ քիչ անգամ կամ ոչ՝ Իրէք կընադորդուին : Այդ աստիճանի բարեպաշտ երեւիլն իննեւտամներորդ դարու լուսաւոր ոգոյն հակառակ կըզսնեն : Հարցուփորձով կըցած եմ ստուգել որ շատեր եւս կան որք ի ներքուստ քրիստոնէական ոգի կըկրեն , այլ որովհետեւ մէկ անգամ այդ անտարբերութեան մէջ ինկած են , կըզժուարանան բարի սկզբնաւոր-

ութիւն մի անել, եւ մի քիչ եւս այլոց կարծիքներէն կը վախնան ու կ'ամաչեն :

Ուրեմն զարմանալի չէ որ ի սփիւռս Անգղիոյ գտնուող հայ գաղթականութեան մէջ եւս մի համեմատական բաժին ունինք այս ընդհանուր զեղծման եւ ժամանակիս անտարբերութեան : Ինչպէս յայլ ամենայն իրս, նոյնպէս եւ այս կէտին մէջ, հնացեալ սխալն զգուշութեամբ եւ կամայ կամաց պիտի ուղղուի : Առաջին քայլն է որ հասկացողն ինքնին իւր սխալն տեսնէ եւ ուրիշներու եւս հասկացնէ : Յետ այնու բարի օրինակաւ յառաջ ընթանայ ոչ թէ առաքելական դարու քրիստոնէից պէս ամեն Ս. Պատարագի — թէպէտ եւ ցանկացողն այս եւս կարող է վայելել առանց օրինական արգելքի, — այլ եկեղեցւոյ գլխաւոր տօներուն, տարին հինգ վեց անգամ հաշորդուի, եւ իւր ազդեցութեան ներքոյ գտնուող բոլոր անձեր, ընտանիք, զաւակունք եւ այլն. նոյն համոզման բերէ, զայնս առաջնորդելով ի Ս. Սեղան, գայ կայնի իւր Արարչի մօտ պարզերես՝ Սաղմոսերգուի խօսքերով. « Ահաւասիկ ես եւ մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած » : Ճշմարիտ հաւատացեալն պէտք է ամենայն երկչոտութիւն եւ մտտի ամօթխածութիւն իւրմէ փարատէ յիշելով մեր Փրկչի խօսքեր. « Ձի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զիս եւ Որդի Մարդոյ յամօթ արասցէ յորժամ գայցէ փառօք իւրովք եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց : »

Ս. Պատարագի ժամէն զուրս հաղորդուիլն կը նշանակէ թերակատար մասնակցութիւն Ս. Խորհրդոյն, քանի որ մարդ առողջ է եւ հիւանդութիւն չունի : Ս. Հաղորդութիւնն որ եկեղեցւոյ մէջ կը պահուի՝ կը կոչուի Յեսիկ քոշակ, եւ կը տրուի, կամ պէտք է տրուի, միայն ծանր հիւանդաց որք կարող չեն անձամբ եկեղեցի գնալ եւ Ս. Պատարագին ներկայ գտնուիլ : Երբեմն նաեւ յանկարծական եւ սախողական պարագայից մէջ, երբ Ս. Պատարագին ներկայ գտնուիլն անհնարին համարուի, օրինակի համար, յանկարծական ճանապարհորդութեան առթիւ, կրնայ նաեւ առողջաց մատակարարուիլ : Սակայն առանց օրինաւոր պատճառի, գլխաւորաբար ծով չը պահելու համար կամ ուրիշ կերպիւ անձնական հանգստութիւնը չը խանգարելու պատրուակաւ, Յեսիկ քոշակն հաղորդութիւն տալն որպէս եւ հաղորդուիլն՝ անկանոնութիւն է, եւ հետեւաբար մեղք է :

## 10. Ս.ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ . ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹԻՒՆ

Մի երկու խօսք եւս Ս.Մկրտութեան Խորհրդոյն վերայ խօսիլ արժան կը համարիմ :

Մկրտութիւնն Քրիստոնէական Եկեղեցւոյ անդամակցութեան խորհուրդն է որով երախայն « Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց , ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի , լինիլ ժառանգակից Քրիստոսի , եւ տաճար Հոգւոյն Սրբոյ : » Մեր Եկեղեցին կը պահանջէ նորածին մանուկն ըստ կարի փութով , ընդհանրապէս ծննդեան ութերորդ օր , ի Ս.Մկրտութիւն բերել , որովհետեւ Եկեղեցին կ' ուղէ օր յառաջ իւր զաւակներն երկնից արքայութեան ժառանգներ դրել , զի մի գուցէ , ի դէպս յանկարծական մահու , այդ Ս. Խորհուրդէն զրկուին : Այլ քան զի դեռատի մանկունք պէտք եղած հասկացողութիւնը չունին որ այդ ահաւոր Խորհրդոյ նշանակութիւնն իմանան եւ դորա պատասխանատուութիւնն իւրեանց վերայ առնուն , Եկեղեցին մի արժանաւոր ինսամակալ կը հաստատէ , մանկան ծնօղներէն զատ , որ Կնխանայր անուամբ՝ մկրտեալ մանկան կողմանէ քրիստոնէական կենաց եւ վարուց պատասխանատուութիւն յանձն կ' առնու , այսինքն , կ' ընդունի իւր հոգեւոր ինամոց յանձնուած մանուկն կրթիլ քրիստոնէական օրինաց համեմատ , եւ նորա վարուց ու բարուց վրայ հսկիլ մինչեւ նորա յարգունս հասնին , երբ մանուկն ինքնին կարենայ այլ եւս լիովին ըմբռնել այն ուխտ ու պատասխանատուութիւն որ իւր կողմանէ եղաւ առաջի Ս. Աւագանին կնքահօր բերանով :

Եկեղեցին մեծ իմաստութեամբ մանկան ծնօղաց օգնական կը կարգէ մի այլ անձ — Կնքահայրը . որովհետեւ ծնօղները կրնան լինիլ անարժան կամ տգէտ ու անուս անձինք : Ուստի կը հետեւի որ մի այնպիսի անձն պէտք է կնքահայր ընտրուի որ իւր գիտութեամբ , քրիստոնէական հաւատովն ու առաքինասէր վարուքն արժանաւոր առաջնորդ եւ երաշխաւոր հանդիսանալ կարենայ մկրտեալ մանկան :

Այսու հանդերձ ձեռնհաս ծնօղք չը պիտի կարծին թէ իւրեանք որեւէ պատասխանատուութենէ զերծ են . իւրեանք եւս պարտին իւրեանց կարողութեան չափ կնքահօրը աջակցիլ եւ իւրեանց զաւակի գլխաւորապէս քրիստոնէավայել կրթութեան համար հոգ տանիլ :

Այս գեղեցիկ սովորութեան եւ օրինաց զէմ գործուած զեղծումն եւս , կարող եմ ասել , մեր ազգի եւ Եկեղեցւոյ

զաւակաց համար աղետալի եղած է : Կնքահայրութիւնն մեր մէջ այսօր որուէ նշանակութիւն չունեցող , անպատասխանատու , բարեկամական մտերմութիւն մի է : Կնքահայր կրնէրկայացունեն մի անհաւատ կամ անտարբեր քրիստոնեայ , եւ մինչեւ իսկ մի այլադաւան օտարական (դունուրեք հեթանոս) : Ոչ սակաւ կնքահայրութեան պաշտօն կրժարէ նաեւ մի դեռատի տղայ որ ինքն տակաւին կնքահայրի խնամոց ներքոյ լինելու է , եւ դեռ ոչ իմացական կարողութիւնն ունի քրիստոնէական հաւատն ըմբռնելու համար , եւ ոչ այն պատասխանատուութեան նշանակութիւնը գիտէ որ ի դիմաց իւր գիրկը գտնուող մանկան իւր վերայ կ'աւնու : Մէկ խօսքով « կոյր կուրբի առաջնորդէ : »

Ո՛վ ծնողներ եւ կնքահայրեր , որ շատ անգամ ձեր զաւակաց ու սաների բազմութեամբը կը պարծիք , մեր եկեղեցւոյ Մաշտոցը ձեռք բերէք , եւ երբեմն Կիրակի օրեր եւ ուրիշ ազատ ժամերնուդ կարդացէ՛ք այդ սուրբ գիրք եւ իմացէ՛ք մեր եկեղեցւոյ անդամակցութեան պայմաններ . տեսէ՛ք ի՛նչ կարեւոր պարտքեր ունիք կատարելու ձեր եւ ձերայնոց յաւիտեանական երջանկութեան համար : Դուք նոյնքան իրաւունք եւ պարտիք ունիք գիտնալու մեր եկեղեցւոյ օրէնքներ որքան բարձրագոյն կղերիկոսն : Մենք հայերս յաճախ կը պարծինք թէ Հայաստանեայց եկեղեցին ժողովրդական եկեղեցի մի է . սակայն աշխարհական դասէն հարիւրին քանի՞ մեր կրօնի տարրական վարդապետութիւնները գիտեն , կամ մեր եկեղեցւոյ պաշտօնական գիրքերու — ժամագրոց , Մաշտոցի եւ Ս. Գրոց — բովանդակութեան հետ ծանօթ են : Կամ աւելի լաւ ուստի՞ պիտի սովորած լինին այս բաներ , քանի որ ոչ դպրոցաց մէջ կանոնաւորապէս կ'աւանդուին , ոչ եւս ծնողք եւ կրնքահարք ըստ բաւականին փոյթ կը տանին այսպիսի իրաց գիտութեան եւ զասաւանդութեան :

Եթէ խորհելու լինինք թէ ի՛նչ մեծ շնորհ եւ ողորմութիւն ցոյց կը տայ մեզ Աստուած , երբ նա մեզ զաւակ ու շառուիլ կը պարգևէ : Չենք կարող քրիստոնէական ջերմ հաւատ ունենալ , եթէ այսպիսի մեծամեծ բարեաց համար մեր երախտագիտութեան զգացումներ չ'արտայայտենք՝ Եկեղեցւոյ սահմանեալ ճանապարհաւ եւ կարգադրութեամբ օրններ տալով մանկան ծնունդը եւ որոշեալ ժամանակին Ս. Եկեղեցի տանելով եւ մկրտել տալով , եւ Գառասնօրեայ կարգն եւս անխափան կատարելով :

## 11. ԿԱՐԳ ՔԱՌԱՍՆՈՐԵԱՅ ԸՆԾԱՅՄԱՆ

Քառասունքի կարգն այն է զոր Աստուած Իսրայելեան ազգի մէջ հաստատեց եւ Տէրն մեր իւր իսկ օրինակաւն նուիրագործելով վերահաստատեց : Կը կարգամք Ղուկասու Աւետարանին մէջ . « Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի , ածին զնա յերուսաղէմ յանգիման առնել Տեառն : »

Այս Ս. Կարգ երկու նշանակութիւն ունի : Առաջին՝ մօր կողմանէ գոհութիւն առ Աստուած որ ծննդաբերութեան ծանր վտանգներէն ազատուած է եւ իւր առողջութիւն վերահաստատած , եւ այժմ զկնի քառասուն աւուրց առաջին անգամ կրմանէ Աստուծոյ Տաճարը սրբուելու համար . ուստի եւ քահանայն կ'աղօթէ վասն նորա . « Ի բայ լուս գաղտ մարմնոյ եւ զբիծ հոգւոյ սորա : » Ինչքան մայրեր կ'ընկճին ծննդաբերութեան ցաւոց ներքոյ եւ կըմնանին կամ երկարատեւ հիւանդութեանց կ'ենթարկուին : Ապա սրքան ապերախտ պիտի համարուի այն մայրն որ այս բոլոր վտանգներէ ազատուած , մահուան ձեռքէն ճողոպրած ուրախ զուարթ կըչըջի , կըզմայլի ու կը հրճուի իւր նորածին զաւակի վերայ , սակայն չի խորհիր կամ փոյթ չի տանիր քառորդ ժամու չափ Աստուծոյ Տաճարը մտնել եւ այս անգին բարեաց համար գոհութիւն մատուցանել առ Պարգեւողն ամինայն բարեաց : Այս եւս գիտնալու է որ ըստ եկեղեցական օրինաց մի ծննդական կին առանց քառասնօրեայ սրբութեան կարգը կատարելու չը պիտի եկեղեցական սրբազան պաշտամանց մասնակցի , կամ Ս. Պատարագին ներկայ գտնուի կամ հաղորդութեան եւայլն . եւ տակաւին շատ տեղեր ուր եկեղեցւոյ աւանդութիւնը բարեխղճութեամբ կըպահուի , մայրեր մեծաւ երկիւղածութեամբ կըյարգեն այս օրէնք եւ զկնի որդեծնութեան առաջին եկեղեցի գնալն կըլինի իւրեանց քառասնօրեայ սրբութեան եւ ընծայման առթիւ :

Երկրորդ նշանակութիւնն է — նորածին զաւակն , ըստ օրինի Տեառն , ընծայել Աստուծոյ : Երբ Իսրայէլացւոց պատճառաւ Աստուած ընդհանուր պատուհաս զրկեց Եգիպտոսի վերայ , եգիպտացւոց բոլոր անդրանիկ զաւակները կոտորելով եւ իւր ընտրեալ ժողովուրդն այդ սոսկալի պատուհասէն զերծ պահելով , նա պահանջեց որ Իսրայէլացիք ի նշան երախտագիտութեան եւ յանմոռաց յիշատակ աստուածային սիրոյ , իւրեանց արու անդրանիկ զաւակներ ըն-

ծային ի սպասաւորութիւն Տաճարի: «Ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեացի:» Այս անդրանիկներն էին որ Իսրայէլացւոյ քառասնամեայ թախաժաման միջոցին ըստ մեծի մասին հոգեւոր պաշտօն կրկատարէին: Այլ հետզհետէ ժողովրդեան բազմանալու եւ այլ անպատեհութեանց պատճառաւ, հրէից հոգեւորականք կամ քահանայք միայն Ղեւտական ցեղէն ընտրուեցան: Բայց այս ընծայման աւանդութիւնը շարունակուեցաւ. միայն այս տարբերութեամբ որ մանուկն Աստուծոյ ընծայելէն վերջ՝ վերստին կրփրկանաւորէին, այսինքն, յետս կրգնէին «ըստ ասացելոցն յօրէնսն Տեառն, զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղանեաց» նուիրելով Տաճարին, իւրեանց զաւակը նորէն կ'առնէին տուն կրտանէին: Մանուկն Յիսուս միեւնոյն մտօք Տաճար տարուեցաւ եւ Սիմէոն ծերունւոյն ձեռօք ընծայուեցաւ:

Մեր եկեղեցին այս օրէնք եւ բարի սովորութիւն ոչ թէ միայն անդրանիկ արու զաւակի, այլ բոլոր զաւակաց վերայ տարածեց, որովհետեւ նոր Ուխտի մանկունքս մի «սուրբ ազգ» կրկազմենք եւ ամեն ոք առհասարակ որ յանուն Ս. Երրորդութեան մկրտեալ է՝ նուիրեալ է ի սպասաւորութիւն եւ ի ծառայութիւն Բարձրելոյն. զի Յիսուս Քրիստոս «սիրեաց զմեզ, եւ ելոյժ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով. եւ արար զմեզ թաղաւորս եւ քահանայս Աստուծոյ եւ Հօր իւրոյ:»

Աստ նորէն կրկրկնեմ, ո՛րքան քարասիրտ լինելու է մի մայր որ սրտի իրական գոհունակութիւն չի զգար իւր առողջ ու խնդազին մանկան վերայ, մինչ բազմաթիւ մանուկներ ծնուելէն քիչ վերջ կրմեռնին կամ սնդէն մեռեալ կը ծնանին, եւ ինքզինքն եւ իւր տուն այն հաճոյքէն ու օրհնութեանէն կրզրիէ զոր Քառասունքի ազօթքն կ'ընծայէ, երբ քահանայն մանուկը գիրկն առած առաջի Ս. Սեղանոյ կ'աղերսէ. «Աղաչեմք եւ խնդրեմք ի քէն, պահեա՛ զաղայս զայս, եւ աճեցո՛ շնորհօք անտեսանելի զօրութեամբ քով:»

## 12. ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ԿԵԿԴԱՆԵԱՑ ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ

Հասարակաց Ազօթից մէջ կարեւոր տեղ կըբռնեն բարեխօսութեան ազօթքներն վասն ընդհանուր որպէս եւ մասնաւոր պարագայից կենդանեաց եւ հանգուցելոց: Սարկաւազի արտասանած քարոզներն կըծանուցանեն թէ որպիսի՝

պարագայից համար աղօթելու ենք, եւ շատ անգամ կը-  
 յիշեցնեն մեզ մերայնոց հոգեւոր եւ մարմնաւոր պէտքերն  
 որոց համար մենք աղօթելու կըկոչուինք: Օրինակի հա-  
 մար, Ասասցախը ըստ ինքեան առ Աստուած ուղղեալ ա-  
 ղօթք չէ, այլ յորդոր առ ժողովուրդն որ այս ինչ եւ այն  
 ինչ պարագայից համար աղօթենք: Սարկաւազը պարագայն  
 կըյիշեցնէ եւ մենք պիտի աւելցնենք մեր մասնաւոր  
 պէտքը եւ երգենք «Տէր ողորմես»: Երբ նա կըծանու-  
 ցանէ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», մենք  
 պարտինք լռելեայն աւելցնել, եթէ պէտքը կըզգամք,  
 մանաւանդ «այս կամ այն երկրի»: Երբ Վասն եպիսկո-  
 պոսաց, վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, թա-  
 գաւորաց եւ իշխանաց աղօթելու կըկոչուիմք, պէտք է  
 լռելեայն աւելցնել այս կամ այն մասնաւոր անուն որ մեր  
 կարծեօք Աստուծոյ մասնաւոր ողորմութեան պէտք ունի:  
 Երբ կըլսենք Վասն ճանապարհորդաց, նաւորդաց, հիւան-  
 դաց եւ վշտացելոց՝ մեր մասնաւոր մերձակայք եւ բարե-  
 կամք պէտք է յիշուին, որք այդպիսի վտանգից մէջ գտնը-  
 ւելով՝ Աստուծոյ օգնութեան կարօտ են: Երբ կըլսենք  
 «Վասն հոգւոցն հանդուցելոց», քարասիրտ կամ թերահա-  
 ւատ պիտի լինիմք եթէ չը յիշենք մեր սիրելիներ որք իւ-  
 րեանց կենդանութեան ժամանակ որ եւ է կերպիւ մեր վե-  
 րայ երախտիք ունեցան կամ սէր ցոյց տուին:

Մենք կըհաւատանք որ Քրիստոսի Եկեղեցին իւր բոլոր  
 բաժանումներոյն եւ ճիւղերոյն հանգերձ՝ մի է եւ միացեալ է  
 Քրիստոսի հետ «ուր եւ կարգան զանուն Տեառն սրբու-  
 թեամբ»: Այս ասել կուզենք երբ կըզաւանիմք. «Հաւա-  
 տամք ի մի միայն ընդհանրական եւ Առաքելական Ս. Եկե-  
 ղեցի»: Այս միութիւնը կայ ոչ թէ միայն կենդանեաց  
 մէջ, աշխարհի վերայ գտնուող քրիստոնէից — Զինուորեալ  
 եկեղեցւոյ մէջ, այլ նաեւ ի մէջ մեր եւ «հոգւոցն հանդու-  
 ցելոց որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննչե-  
 ցին», այսինքն, Յաղմական եկեղեցւոյ մէջ կըզանուին:  
 Ուստի ինչպէս որ կըհաւատանք թէ յաստեացս փոխուած  
 եւ «յօթեւանս արդարոց», Աստուծոյ փառքը վայելող  
 մեր բարեկամներ — սուրբերը կ'աղօթեն մեզ համար եւ  
 կըբարեխօսեն առ Աստուած, մենք եւս այդ միութիւնը  
 լրացնելով՝ պարտիմք փոխադարձաբար աղօթել վասն նոցս  
 ինչպէս կ'աղօթենք վասն կենդանեաց:

Այսպիսի բարեխօսութեան աղօթք մասնաւոր կերպիւ Ս.

Պատարադի միջոցին կրմատուցուի «առաջի անմահ Գառին Աստուծոյ,» եւ Պատարագամատոյցի մէջ այլեւայլ տեղեր կան ուր ժողովրդեան մասնաւոր խնդրուածներ կրնայ աւելցնել պատարադիչ քահանայն ըստ խնդրանաց ժողովրդեան :

Ուրեմն, բարի՛ քրիստոնեայ, եթէ ունիս մի հիւանդ բարեկամ, հեռաւոր ճանապարհորդ, որեւէ կերպիւ վշտագնեալ մէկն՝ միեթարութեան կարօտ, կամ այնպիսի ոք որ կըհաւատաս թէ միայն Աստուծոյ ողորմութեան կրկարօտի իւր հոգեւոր կամ մարմնաւոր տառապանքէն ազատուելու, կամ հոգեւոր կամ մարմնաւոր շնորհք ընդունելու, քո նըւիրական պարտքն է քահանային իմացնել եւ խնդրել որ յիշէ զնա կամ զնոսա առաջի Ս. Պատարագի: Նոյնպէս հանդուցեալ ազգականացդ համար ազօթել եւ ազօթք մատուցանել տալ՝ քո նուիրական պարտքն է: Մեր եկեղեցին տարւոյն մէջ մի քանի օրեր որոշած է իբրեւ օր յիշատակի մեռելոց, երբ հանդուցելոյն ազգականք գերեզման կ'երթան քահանայի հետ, եւ այնտեղ մասնաւոր կերպով կ'աղօթեն իւրաքանչիւր հանդուցելոյն համար:

Բարեխօսութեան այս սիրոյ պարտքն որչափ օգուտ է նոցա որոց համար կ'աղօթենք՝ նոյնքան մեզ աղօթողացս համար: Առանց մեր աղօթքին եւս կարող է Աստուած իւր բարերարութիւնները ցոյց տալ եւ իւր արարածոցը ողորմիլ: Բայց այս հոգեւոր կրթութիւնը մեր հաւատն առ Աստուած առաւել եւս կըզօրացնէ եւ մեր սէր առ ընկերս առաւել եւս ցոյց տուած կըլինիմք նոցա համար աղօթելով:

### 13. ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Գաղթական ժողովրդեան ամենակարեւոր եւ միանգամայն ամենազօրեւորին խնդիրն է ամուսնութեան խնդիր, այսինքն, երբ հայ երիտասարդք, իւրեանց զաղթականութեան սակաւաթիւ լինելուն պատճառաւ, յարմար հայազգի ամուսին ընտրել չը կարենալով, օտարաց հետ կըլինամասնան: Չուտ կրօնական տեսակէտով մեր եկեղեցին որեւէ արգելք չի դնէր այսպիսի խառն ամուսնութեանց, եւ ոչ իսկ անհրաժեշտ կըհամարի որ օտար կողմը Հայաստանեայց եկեղեցւոյ զաւանութիւն ընդունի, մասաւանդ որ այդ առթիւ եղած զաւանափոխութեանց հարիւրին ինստուն եւինն միայն կեղծաւորութեան կամ առժամապէս դժուարութենէ ազատելու նպատակաւ եւ ոչ ներքին համոզմամբ տեղի կ'ունենան: Այսպիսի ամուսնութեանց մեծագոյն

վեան ազգութեանը կրհամնի . վասն զի մի բուռն գաղթական ժողովուրդ չի կարող պէտք եղած բարոյական հայկական ազգեցութիւնը ներգործել օտարին վերայ նորա հայրենեաց մէջ , կամ այդ օտարէն ծնուած զաւակաց վերայ : Մենք փորձով գիտենք թէ ինչքան դժուարին է նոյն իսկ բոլորովին հայ ծնողաց զաւակներ , որ օտարութեան մէջ կրծնանին , հայ ազգային զգացումներով մեծցնել . ո՞ւր մնաց երբ ծնողներէն մին օտարազգի է : Մեզմէ շատ աւելի զօրաւոր եւ քաղաքակիրթ ազգի գաղթականք — զոր օրինակ , Անգղիացիք ի Գաղղիա , Իերմանացիք յԱնգղիա եւ այլն , — բնական բերմամբ կ'օտարանան իւրեանց պանդխտութեան մէջ , մանաւանդ երբ ծնողներէն մին օտար լինի : Ուստի մեր օտարացեալ զաւակաց վերայ չը պիտի գարմանանք , եւ չը պիտի կարծենք թէ միայն հայն է օտարաւոր :

Ամուսնական խնդրոյն այս հայեացքն աւելի ընկերային եւ ազգային լինելով , կըթողում որոց կըպատկանի այդպիսի խնդրոց լուծում : Իմ հայեացքն կրօնական է , եւ խօսքս ոչ այնքան տեղւոյս ներկայ գաղթականաց կըպատկանի որքան ընդհանրապէս այնպիսի վիճակի մէջ գտնուողներին , եւ մանաւանդ ապագայ սերունդին սպառնացող վտանգներին : Որքան որ մեր Եկեղեցւոյ ոգւոյն ուղղակի հակառակ չէ խառն ամուսնութիւն , այնու հանդերձ կարող է անուղղակի կերպիւ մնասաբեր լինիլ :

Քրիստոնէութիւնը մի սոսկ տեսական գրութիւն չէ զոր մարդիկ իւրեանց մտաց մէջ կարենան պահել , առանց յայտնելու կամ ի հանդէս ածելու : Նա մի կրօն է որ պէտք է մեր ամբողջ կեանքը կազմէ ու յարդարէ , մեր վարուց ու բարուց ուղղութիւն տայ , եւ ամենուրեք եւ ամեն ժամանակ , թէ մեր առտնին պարագայից մէջ եւ թէ արտաքին զբաղմանց միջոցին , փայլի եւ լուսաւորէ : Նորա յաւիտենական ճշմարտութիւնը պիտի երեւայ մասնաւորապէս մեր ընտանեկան յարկի ներքոյ : Ամբողջ ընտանիքը պէտք է իասին եւ միակրօն աղօթեն եւ խօսին և խորհրդակցին սրբազան առարկայից վերայ , Աստուծոյ սքանչելեաց եւ ողորմութեան վերայ :

Ծնողք ամենէն աւելի իւրեանց համերաշխ կրօնասիրութեան բարի օրինակաւն պիտի տպաւորեն իւրեանց զաւակաց սիրտերու մէջ կրօնի սէրն . եւ միայն այսպիսի կրօնական համերաշխութիւն ունեցող ծնողք կարող են իւրեանց զաւակներ կրօնի եւ առաքինութեան շաւիղովը

մեծցնել : Բայց երբ հայրն այսպէս կըխորհի , մայրն այնպէս , հայրն մէկ եկեղեցի կ'երթայ , մայրն մի ուրիշ , խեղճ մանուկն սկիզբէն կըշուարի , այլ ի վերջոյ կ'ապաստանի կրօնական անտարբերութեան մէջ , ոչ հօր կրօնը ոչ մորը՝ իւր համար որ եւ է նշանակութիւն կ'ունենայ , եւ կրօնապէս անտարբեր մեծցող մարդն ազգապէս եւ այլ ամենայն իւրիք անտարբեր մարդ կըգառնայ : Այսպիսի անտարբեր հայ մի , ինչքան մեծ ու անուանի մարդ եւս լինի , դարձեալ կորուսած է հայ ազգի եւ Հայաստանեայց եկեղեցւոյ անդամակցութենէ :

Իազթական հայոց օտարաց հետ խնամանալու յետաակար հետեւանքն անխուսափելի եւ անդարմանելի է : Ոչինչ նըշանակութիւն չունի թէ Ս. Պատկ հայ քահանայի ձեռքով կատարուեր է , կամ զաւակներն Հայոց եկեղեցւոյ մէջ մկրտուեր են : Մի ահապին զետի հոսանքին բահով զէմ գննելն անկարելի է . միակ ապահով ճանապարհն է զքեզ այդ հոսանքէն հեռի պահել : Եթէ կ'ուզես հայ մնալ եւ զաւակներդ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ պահել , եւ հայ ազգին արժանաւոր եւ հաւատարիմ սերունդ հասցնել , զքեզ բացարձակապէս օտար եւ խտոն ամուսնութենէ հեռու պահէ :

#### 14. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

«Աստուած , ականջօք մերովք լուաք , զոր հարքն մեր պատմեցին մեզ , զգործն զոր գործեցեր յաւուրս նոցա , յաւուրսն առաջինս :» Դաւիթ մարգարէ այս Սաղմոսին մէջ Իսրայէլեան ազգի նոր սերունդի կողմանէ կըխօսի , որք երախտապէտութեամբ կըյիշեն այն զաստիարակութիւն զոր նոքա իւրեանց ծնողներէն եւ նախորդներէն ընդունած են ի մասին այն գործոց «զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա . յաւուրսն առաջինս :» Մէկ խօսքով նոր սերունդն երախտապարտ կըզգայ որ իւրեանց հայրեր ու մայրեր խնամք տարեր են՝ իւրեանց զաւակաց մտաց եւ սրտից վերայ դրոշմել Աստուածային կրօնի եւ Մովսիսական օրի նաց զխաւոր եւ էական ճշմարտութիւններն :

Արդեօք ներկայ ժամանակի հայ հայրերէն եւ մայրերէն քանի՞ոն կարեն խղճի մտօք խոստովանիլ թէ Աստուածային կրօնի եւ իւրեանց մայրերի եկեղեցւոյ ճշմարտութիւններ աւանդած լինին իւրեանց զաւակներուն : Կամ այդ հայ զաւակներէն քանի՞ոն պիտի կարենան այժմ կամ ապագային՝ Սաղմոսերգուի խօսքերով գոչել . «Աստուած ,

ականջօք մերովք լուսք , զոր հարքն մեր պատմեցին մեզ :» Աւա՛ղ , գիտեմ դէպքեր (Անգղիայէն դուրս) երբ ծնողք ոչ թէ միայն իւրեանց զաւակաց կրօնական դաստիարակութեան համար փոյթ չեն տարեր , այլ նաեւ բացարձակ արգելք յարուցած են , եւ ամէն կերպիւ ջանացեր են զնոսա ըստ կարի հեռու պահել կրօնական ազդեցութենէ , աստուածսիրութեան հուրը չիջուցեր են իւրեանց զաւակաց անմեղ սիրտերէն , եւ փոխարէն՝ իւրեանց աներկիւղած ընթացքով եւ օրինակաւ՝ անտարբերութիւն եւ գործնական անկրօնութիւն սորվեցուցեր են : Եթէ ոչ , ուր է այն կրօնական նախանձախնդրութիւն որով մեր հին պատմութեան իւրաքանչիւր էջը օծուած է . մի կրօնասիրութիւն որ ոչ թէ միայն եկեղեցականաց մէջ կ'երուէր , այլ ամբողջ ազգի կենացն ուղղութիւն կըտար . եւ երբեմնակի կըցոլար միութեան այն հզօր ոգին զոր միայն քրիստոնէական սէրը կրնայ յառաջ բերել : Ի՞նչ է պատճառն որ ներկայ դարու երիտասարդ դասն ինքզինքն ազատ կըկացուցանէ Քրիստոսի քաղցր լուծէն եւ իւր նախնեաց աստուածպաշտութենէն , եթէ ոչ այն՝ որ նոցա հայրեր փոյթ չը տարին «պատմիչ նոցա զգործն զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա :»

### 15. ԵՆՈՂԱՅ ՊԱՐՏԻՔ ԱՌ ԶԱՒԱԿՈՒՆՍ ԻՒՐԵԱՆՑ

Երբ Աստուած մի մարդու զաւակ կը պարգեւէ , զայն մի մեծ եւ ծանր պատասխանատուութեան կ'ենթարկէ : Որքան մի հայր իւր զաւակի մարմնաւոր առողջութեան հօգ տանելու պարտական է , առաւել եւս նորա հոգւոյ փրկութեան եւ յաւիտենական կենաց համար փոյթ տանել պարտի . վասն զի հոգւոյ փրկութիւն եւ յաւիտենական կեանք՝ այս աշխարհի վերայ անցուցած կենցաղավարութենէ կախուած են : Ի զո՛ւր կ'աշխատինք մեր զաւակաց ամեն տեսակ երկրաւոր բարիքներ ընծեուել , եթէ բարեաց ամենապատուականն եւ ամենէն անհրաժեշտն , այսինքն , սէր կրօնի եւ երկիւղածութիւն հեռու կը պահենք ի նոցանէ :

Սողոմոն թագաւորի իմաստութիւնն ոչ թէ միայն կրօնի եւ աստուածպաշտութեան մէջ կը փայլէր , այլ նաեւ աշխարհային իրաց մէջ իւր ժամանակակցաց ամենուն հիացում եւ զարմանք կը պատճառէր . իբրեւ դատաւոր , գիւնադէտ , հրամանատար , ճարտարապետ , գիտնական եւ այլն . եւ իւր

այս բաղմակողմանի հմտութեան եւ հանճարոյ գաղտնիքն աւանդած է առակաց դրքի սկիզբն՝ ասելով . «Սկիզբն ի մասսութեան երկիւղ Տեառն :» Այս մեծ եւ իմաստուն թագաւորն , քանի որ «երկիւղ Տեառն» իւր սրտի մէջ ունէր , ճոխացաւ ու զարգացաւ եւ արեգական պէս փայլեցաւ ի վերայ երկրի . այլ երբ այդ աստուածային երկիւղն իւր սրտէն հեռացոյց եւ ամպարչտութեան ճանապարհ ընտրեց , ինկաւ եւ իւր հետ ունեցած բոլոր ճոխութիւն եւ փառք ու մեծութիւն :

Ի՛նչքան հայրեր մեր ազգի մէջ չարաչար յուսավրէպ եղած են իւրեանց զաւակներէն . մինչդեռ նոքա կըյուսային ի փոխարէն երկարամեայ զգուշաւոր մարմնաւոր խնամոց , բաղմածախ զաստիարակութեան յայլեւայլ գիտութիւնս եւ ի լեզու՝ բարձրադոյն դպրոցաց մէջ , խոնարհ ու համեստ եւ առաքինի զաւակներ ունենալ՝ ծնողաց փառք ու պարծանք բերող , ի վերջոյ տեսած են իւրեանց առջեւ մոլի եւ արբչիւ ու անառակ երիտասարդներ , որք որեւէ իւրք օգտակար չը լինիլէ զատ , անպատուութիւն եւ նախատինք եւս բերած են իւրեանց ալեւորեալ ծնողաց գլուխն : Ուրեմն արժանի են հայրեր յուսավրէպ լինելու , եւ իւրեանց արժանեաց պատժոյն մէկ մասն կրելու յայսմ աշխարհի . այն հայրեր որք կըզլանան պատմել որդւոց իւրեանց «զամենայն գործսն զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա» , եւ որք կըզրկին իւրեանց զաւակներ կրօնի եւ երկիւղածութեան կրթութենէ , յորմէ անբաժան է բարոյական կրթութիւն :

#### 15. ՏԵՂԻՈՅՍ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆ

Մասնաւորելով խօսքս տեղւոյս փոքրիկ գաղթականութեան վերայ , ուրախալի է տեսնել հայ ընտանեաց օրըստօրէ աճիլն : Եւ տակաւ առ տակաւ մի նոր սերունդի յառաջ վալն : Սակայն այստեղ ծնողող եւ մեծցող հայ երիտասարդաց ազգային ոգիէն օտարանալու , Եկեղեցւոյ ազդեցութենէն եւ կրօնի ու առաքինի վարուց ճանապարհէն չեղելու փորձութիւնը շատ աւելի մեծ է քան թէ ի հայրենիս եւ ի բնագաւառս մեր :

Հայ մանուկն աչքը կըբանայ եւրոպական ճոխութեան ու յառաջգիմութեան մէջ , տեղական լեզուն կըլինի իւր բնական , աւելի ընտանի քան զիւր մայրենի բարբառ . իւր եւրոպացի դասակիցներէն վար չը մնալու փութաջա-

նութեամբ, որում բնականաբար կրհամաձայնին ծնողք, շատ հոգ չի տանիր իւր մայրենի լեզուի գիտութեան. մանաւանդ որ շրջապատող պարագայից շնորհիւ՝ ոչ իւր տոհմային լեզուն, ոչ իւր ազգի պատմութիւնն կրներչնչէ այն հրապոյրն՝ զոր իւր երկրորդ հայրենեաց լեզուն ու գրականութիւն կրներչնչեն: Լեզուի անգիտութեան պատճառաւ Հայաստանեայց Եկեղեցին կրմնայ նորա համար առանց որեւէ նշանակութեան. մի մեռեալ հաստատութիւն որ ո՛չ ներքին եւ ոչ արտաքին հրապոյր կամ ոգեւորութիւն ունի: Միւս կողմանէ եւս հայ լինելու գիտակցութեամբն եւ թերեւս ծնողաց ազդարարութեամբն, ուրիշ օտար եկեղեցեաց կրօնական ազդեցութենէ եւս ինքզինքն հեռու պահելով, կրմնայ առանց կրօնի եւ առանց կրօնի հոգեչահ ազդեցութեան:

Քա՛ւ լիցի ինչ չարագուշակ լինել սիրեցեալ հօտիս նոր սերունդի նկատմամբ: Հոգեբանական ընթացքն է այս՝ գտնուող պարագայից. եւ ինչպէս առողջաբանական տեսակէտով լաւ է գիտնալ որ խոնաւուտ ու գէշ օդի մէջ ապրին, անսնունդ կամ վնասակար կերակուր ուտելն՝ բնականաբար հիւանդութիւն եւ մարմնաւոր պայքանկութիւն յառաջ կրբերէ, նոյնպէս գիտնալու է բարոյական եւ հոգեւոր հիւանդութեանց պատճառներն ու վտանգներն, որպէս զի ժամանակին նոցա առաջն առնուի:

#### 16. ԿՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԻՔ

Ոմանք այս չարեաց առաջն առնելու համար մի այնպիսի միջոց կ'առաջարկեն որ միայն շատ հարուստներին կը յարմարի: Կ'առաջարկեն որ երբ զաւակը բաւականին մեծնայ, միքանի տարի իւր հայրենիքը զրկուի որպէս զի այնտեղ դպրոց երթալով իւր լեզուի ու կրօնի մէջ պէտք եղած կրթութիւնն ստանայ: Բայց մի հայ մանուկ մինչեւ հայրենիք գնալու ժամանակ՝ կրնայ այն աստիճան օտարանալ եւ նորա անմշակ հոգին այն աստիճան կարծրանալ, որ մի քանի տարւոյ հայրենեաց նոյն իսկ ամենաբարձր հաստատութեանց մէջ ստացած կրթութիւնն կարող է ապարդիւն մնալ, գէթ ի մասին կրօնի: Այս առաջարկութեան անբաւականութենէ զատ, մտածելու ենք որ այժմ Մանչէսթրի մէջ ունինք նաեւ մի միջին դասակարգ, որոց համար այսպիսի երկար եւ սուղ ճանապարհորդութիւն շատ ծանր՝ գուցէ եւ անկարելի լինի: Նա-

եւ մտածելու է որ վերջին տարիներս սկսած ենք մի ազգատիկ դասակարգ եւս ունենալ, որոց համար այդպիսի խորհուրդ բացարձակապէս անհնար է :

Միակ յուսալի եւ դիւրաւ գործադրելի դրութիւնը կը թուի լինել Ս. Հոգի Եկեղեցւոյս հովանաւորութեան ներքոյ ունենալ մի ազգային դպրոց, յորում շարձական մի քանի անգամ գաղթականութեանս մանուկներ հաւաքուին եւ ազգային լեզուի, պատմութեան եւ կրօնի ուսումնս ստանան հմուտ եւ երկիւղած դասատուի ձեւամբ : Դասաւանդութեան օրեր եւ ժամեր կրնան այնպէս որոշուիլ ու կարգադրուիլ, որ մանուկներ կարենան անխափան յաճախել նաեւ անգլիական դպրոցներ ուրիշ գիտութեանց համար :

Այս կերպիւ ստացած կրթութիւն հարկաւ տարրական կը լինի, բայց այն առաւելութիւնը կ'ունենայ որ ի մանկութենէ աւանդուելով՝ խոր արմատ կը ձգէ նոցա մտաց մէջ եւ զօրաւոր պատուար կը հանդիսանայ օտար փորձութեանց դէմ : Յետ այնու եթէ ծնողներէն ոմանք փափագ ու միջոց ունենան իւրեանց զաւակներ ի հայրենիս բարձրագոյն հայ դպրոցներ ղրկելու, մանուկներ արգէն փոքր ի շատէ պատրաստուած կը լինին, եւ իւրեանց ուղեւորութիւն աւելի օգտակար կը լինի :

17. « ՍԻՐԵՍՑԵՍ ԶԸՆԿԵՐ ԲՈ ԻԲՐԵՒ ԶԱՆՁՆ ԲՈ . »

ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿ

Դառնամք այժմ աստուածային երկրորդ պատուիրանին, այն է՝ « Մի բնացիս զընկեր քո իբրեւ զանձն քո : » Տէրն մեր որ աստուածային պատուիրաններն այս երկու մեծ ճիւղերուն բաժանեց, Իւր անձին օրինակաւն եւս ցոյց տուաւ թէ ի՛նչպէս պարտինք կատարել զայնս : Այն որ օրինաց եւ վարուց ամենաբարձր կատարելութիւն կը քարոզէր, որ ընկերին «յիմար» կամ «մորոս» անուանարկելն, նորա գէմ քէն պահելն կամ նորա զայրոյթը գրգռելն, նոյնքան դատապարտելի կը հռչակէ որքան նոյն իսկ սպանութիւն, որովհետեւ այս վերջինը նախասացեալ յոռի զգացմանց արդիւնք է, նոյն երկնաւոր վարդապետն գործով կատարեց այս խիստ օրինաց ամբողջութիւնն, Իւր ամբողջ կեանքը նուիրելով յօգուտ մարդկային ազգի, նախ անհատաբար Իսրայէլի ժողովրդեան ու ազգի մէջ, եւ ապա ընդհանուր աշխարհի :

Անկարելի է չը զգածուիլ Քրիստոսի հայրենասիրութեան վերայ երբ կրկարդանք յն սարսեցուցիչ բացազանչութիւն . «Նրուսաղէ՛մ, Նրուսաղէ՛մ, որ կոտորէիր զմարգարէան եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ . քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք:» Կամ երբ նաչն ուսին ի Գողգոթա կրբարձրնայ որպէս զի մատուցանէ այն մեծ Պատարազն ՚ի փրկութիւն ազգի մարդկան՝ զոր նա այնքան սիրած էր, բարեպաշտ կիներ ողբայով կրհետեւէին նմա, կրդառնայ եւ կ'ասէ, «Դստերք Նրուսաղէմի, մի լայք ի վերայ իմ, այլ լայքք ի վերայ անձանց եւ որդւոց ձերոց .» իբր թէ ասել կ'ուզէ. «Իմ մահս թող ձեզ չը վրդովէ . ձեր օգտի համար է, գուք յղբացէք Հրէից քարասիրտ ազգի վերայ որոյ ապագայ թշուառութիւն մարգարէաբար կրտեսնեմ եւ որոյ համար ես եւս անդադար ողբացի ու հառաչեցի:»—

Արդարեւ հոգեւոր փրկութիւն ընձեռելու եկած էր Քրիստոս, հոգեւոր թագաւորութիւն հաստատելու, հոգեւոր շնորհներ պարգեւելու . այսու հանդերձ այն որ միանդամայն Արարիչն էր «ամենայն մարդկան եւ ամենայն եղելոց,» չէր կրնար ամենաձեռմ համակրանք չըզգալ մարդկային պիտոյից եւ ազետից ու թշուառութեանց վերայ . մարմնով հիւանդաց բժշկութիւն կըշնորհէր, ազքատներն ու անարգ համարուածներ կըսփոփէր ու կըմխիթարէր, խուռն բազմութեանց հոգեւոր կերակուր տալու ժամանակ նոցա մարմնաւոր կերակուրը զանց չէր առներ: Փարիսեցւոց եւ մաքսաւորաց տուներ առ հասարակ կըմտնէր, նոցա աշխարհային խնճոյքներին կը մասնակցէր եւ նոցա տրտմութեան ժամանակ ինքն եւս կըտրտմէր եւ կըհամակրէր: Ի կանա Դալիլեացւոց հարսանեաց մէջ Իւր ամենատառ նուէրոն կ'օրհնէ զհարսանխան եւ կըհիացնէ զհանդիսականսն՝ զՉուրն ի գինի փոխելով: Նայինայ այրւոյն ողբումն իւր միամօր որդւոյն մահուան համար, Մարիամայ եւ Մարթայի արտասուքն իւրեանց եղբօր վերայ, Փրկչի գութը կըչարժէ, որ նոցա տրտմութիւնն յուրախութիւն կըփոխէ՝ վերակենդանացնելով նոցա սրբելիներն: Թերեւս հրէական հայրենասիրութեամբ իմն նախ կըմերժէ զՍամարուհին, այլ կ'նոջ հովուուսէր փաստաբանութեամբն զգածուելով՝ կ'օգնէ, կ'ողորմի:

18. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՏՈՆ Է ԱՇԽԱՐՀԻՍ ԲՈՂՈՐ  
 ՊԱՐԱԳԱՅՆԵՐՆ ՍՐԲԵԼ ԵՒ ԱԶՆՈՒԱՑՆԵԼ .  
 ԵՒ ՈՉ ԹԷ Ի ԲԱՑ ՄԵՐԺԵԼ

Ոմանք Քրիստոսի անջատ խօսքերէն ուղեցին եղբակայնել թէ՛ կատարեալ քրիստոնեայն պէտք է աշխարհիս դէմ իւր աչքերը գոցէ եւ ապրի, իբր թէ աշխարհէն դուրս կ'ապրի: Հաւանօրէն այս սխալ ըմբռնումը տեղիք տուած է «աշխարհական» բառի գործածութեան մեր մէջ. իբր թէ աշխարհականն նուազ հոգեւոր լինելու պարտի քան զ«հոգեւորական» կոչուածն, եւ այս վերջինը նուազ աշխարհական լինելու է քան «աշխարհական» կոչուածն:

Քրիստոսի քարոզութիւնն աշխարհի չարեաց դէմ էր եւ ոչ թէ աշխարհի ամբողջութեան որ ըստ ինքեան բարի է, քանի որ Աստուծոյ ստեղծուած է, եւ քանի որ «այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ:» Քրիստոսի ամբողջ քարոզութիւնն ու երկբարեւոր կեանք յայտնի ապացոյց են այս աստուածային սիրոյ: Նորա պալատեան նպատակն էր աշխարհիս բոլոր պարագայներ եւ հաստատութիւններ ազնուացնել եւ սրբացնել, ոչ թէ խոտել եւ ի սպառ ի բաց մերժել: Իւր առակաց մէջ աշխարհիս բոլոր գործերէ եւ զբաղումներէ անխտրաբար օրինակ կը բերէ: Այգեգործ, պարտիզպան, սերմանահան, ակնավաճառ, ձկնորս, մաքսաւոր, մեծատուն վաճառական, դատաւոր, փաստաբան, թագաւորք եւ իշխանք, զօրք եւ զօրավարք, աշխարհիս զբօսանքներ ու հաճոյքներ, հարսանիք, հացկերոյթ, ուղեւորութիւն, պատերազմ եւ շատ ուրիշ պարագայներ, որոց իւրաքանչիւր մին իւր օրինաւոր տեղն ունի Ս. Աւետարանի մէջ: Եւ Քրիստոս եկաւ՝ ոչ թէ աշխարհն մի մեծ անապատ դարցնելու, եւ խստակեաց սւ աշխարհուրաց կրօնաւորներով լցնելու, այլ աշխարհիս բոլոր պարագայներն չարչար գործածութենէ մաքրելով՝ ազնուացնելու եւ օրինելու համար. վասն զի երկնից արքայութիւն ժառանգելու պայմանն է այս աշխարհի վերայ ապրելով հանդերձ, չարիքներով ու փորձառութեամբ շրջապատեալ լինելով հանդերձ, չարը մերժել ու բարին ընտրել, «զբարեք պատերազմ պատերազմել, զընթացսն կատարել զհաւատսն պահել:»

Աստուածային իմաստութիւնը կը պահանջէ որ մեր երկնաւոր եւ աշխարհային պարտքը լիովին կատարելով տամք «լկայսերն՝ կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ:»

19. Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՇՏ ՀԵՏԵՒԱԾ Է ԱՅՍ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ  
ՕՐԻՆԱԿԻՆ

Քրիստոսի այս համաշխարհական օրինակին հետեւեցաւ Ս. Եկեղեցին որ իւր քաղաքակրթիչ եւ ազնուացուցիչ հովանին տարածեց այսաբնի բոլոր պարագայից վերայ, մաքրելով զայնս հեթանոսական մոլորութիւններէ եւ զեղծունեւորէ, եւ քաղաքակրթութիւնը հոտոտառուն հիմանց վերայ դնելով, որ հաստատուն է որքան ժամանակ Ս. Աւետարանի ուսուցչն համեմատ կ'ընթանայ այդ քաղաքակրթութիւն: Եւրոպիոյ յուսաւորութիւն անտարակոյս քրիստոնէութեան արդիւնքն է. թէպէտեւ եւրոպական ազգերէն ոմանք այդ ճշմարտութիւն խոստովանիլ չուզեն, իրողութիւնը անուրանալի է. եւ եթէ այս նոր քաղաքակրթութեան մէջ թերութիւններ կան, նոքա Աւետարանի զծեալ ճանապարհէն շեղելուն պէտք է վերագրել:

Հայաստանեայց եկեղեցին եւս իբրեւ Քրիստոսի եկեղեցւոյ մէկ հարազատ ճիւղն՝ իւր ազդեցութիւն տարածած է իւր խնամոց յանձնեալ Հայ ազգի վերայ: Իւր հաստատութեան առաջին օրէն իսկ մեր ազգի լուսաւորութեան եւ բարօրութեան համար միջոցներ գործ դրաւ. եւ անտանելի թշուառութեանց ներքոյ եւ անօրինակ դժբախտութեան ենթարկեալ հայ ազգը իւր պահպանութեոց տակ կազմուրեց եւ զօրացոյց, ընամբնջ լինելէ ազատեց, եւ վերակենդանութեան նոր ոյժ ու զօրութիւն տրւաւ նմա:

Հայոց ազգի՝ քրիստոնէութենէ յառաջ ունեցած քաղաքակրթութեան սահմանն ու աստիճանն ըստ մեծի մասին խաւարի մէջ եւ ենթադրութեանց վերայ հիմնեալ են: Արդէն քաջ գիտենք որ մինչեւ Ս. Աւետարանի ի Հայս ընդհանուր տարածութեան ժամանակ, տակաւին ոչ գիր ունէինք ոչ գրականութիւն, եւ մեր հնագոյն պատմագիրք քրիստոնէութենէ յառաջ շատ բան չունին պատմելու:

Ամեն շրջահայեաց քրիստոնեայ պարտի բացարձակ խոստովանիլ որ եթէ մեր ազգին համար լաւագոյն օրեր երեւակայել կարելի է, այդ միայն Հայաստանեայց եկեղեցւոյ շնորհիւ յուսալի է: Ուրեմն այս զգալի տեսակետով եւս կրկին անգամ ճշմարիտ է ինչ որ ի վերոյ ասացի թէ՝ « Հայու համար արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն: »

## 20. ՍԷՐ ԱՆՁԻՆ ԿԱՄ «ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ»

## ՅԱՃԱԽ ՀԻՄՆ ԸՆԿԵՐՄԻՐՈՒԹԵԱՆ

Տէրունական պատուիրանը «Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո» նախ եւ յառաջ կ'ենթադրէ սեր անձին կամ անձնասիրութիւն, որով չափով ու կշռով կրպահանջուի որ մեր ընկերն եւս սիրենք: Անձնութեան եւ անձնուրացութեան քարոզներ խիստ յաճախ կըխօսուին, այլ դուն ուրեք կըլսուի անձնասիրութեան քարոզ:

Ընկերը սիրելէն յառաջ, զմեզ մեր անձերը արժանաւորապէս սիրելու պէտք ունիմք. նախապէս անձնասիրութեան սահմանը ճանաչել պարտիմք որպէս զի կարենամք ըստ այնմ սիրել նաեւ մեր ընկերն: Շատ անգամ երբ մեր պարտքը կըկատարեմք, կըկարծեմք թէ անձնութեան կըզործեմք. ո՛չ, այդ օրինաւոր անձնասիրութիւն է, զոր մեր Փրկիչն եւս կըհաստատէ ասելով. «Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասցիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարք:»

Մեր կեանքն Աւետարանի օրինաց համեմատ ուղղել, առաքինութեան հետեւիլ, մոլութենէ խորշիլ, այս ամենը կըզործէ այն մարդն որ իւր անձն կըսիրէ եւ կը յարգէ եւ կըպատուէ: Փիտենք թէ ինչ կընչանակէ պատուաւոր եւ անպատիւ, ազնիւ եւ անազնիւ լինելն. երկուսն եւս նախ եւ յառաջ անձին կըպատկանին, մին՝ անձը սիրելէ եւ միւսն՝ անձն չը սիրելէ յառաջ կըզայ: Օրինակի համար, մի առեւտրական կամ արհեստաւոր կամ որեւէ մի պաշտօնեայ իւր գործն ու պաշտօնն արդարութեամբ եւ ճշգրութեամբ վարելով՝ ոչ այլ ինչ գործած կըլինի բայց եթէ ինքզինքը սիրած, եւ ոչ աւելի եւ ոչ պակաս քան թէ իւր սոսկական պարտքը կատարած կըլինի: Իսկ ստախօս եւ անարդար մարդն, արդարեւ իւր ընկերին եւս կըլնասէ, բայց առաւել եւս ինքզինքը կըլնասէ, քանի որ մեզաց անձնատուր լինելով՝ իւր անձին պատիւ ոտնակոխ կ'անէ ամենէն անաչառ դատաւորի, այսինքն, իւր խղճի առջեւ:

Երբեմն կըլսուի թէ աշխարհային գործոց մէջ անկարելի է կատարեալ ճշգրութեամբ եւ արդարութեամբ ընթանալ. գործը վնաս կըկրէ (այսինքն, անարդար շահը կրպակասի) եթէ ամեն պարագային ճշմարիտը խօսելու, ուղիղ վարուելու լինիմք: Նոյն իսկ պարզ նիւթական չահու տե-

սակէտով այս դրութիւն ուղիղ չէ . յիշենք միայն անգլիական առածը թէ

(Հաւատարմութիւն կամ ուղղամտութիւն լաւագոյն քաղաքականութիւն է) : Սակայն աւելի մեծ է խղճի եւ քրիստոնէական անձնասիրութեան եւ ընկերսիրութեան դէմ գործած յանցանքն , որով սակաւ ինչ նիւթական շահու կամ առաւելութեան համար , որ թերեւս կարելի լինի մեզ այլապէս եւս յաջողիլ ձեռք բերել , մեր հոգւոց պայծառութիւնը կընտանացնեմք . մեր անձն ու խիղճը կ'անարգեմք , մեր ընկերին կը նշասենք , մեր կրօնի եւ ազգի անունն ու պատիւ կ'արատաւորենք , եւ մեր յաւիտենական տուժարի մէջ սեւ արձանագրութիւն կը թողումք :

Անխիղճ քրիստոնէի ընթացքն ոչ թէ միայն իւր անձին եւ իւր ընկերին կը նշասէ , այլ նաեւ այն Ս. Կրօնին զոր նա կը խոստովանի , « Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայրոցի ի մէջ հեթանոսաց » : Երբ թերահաւատ կամ անհաւատ մարդիկ կը տեսնեն որ քրիստոնեայ անուն կրող մի մարդ անհաւատարիմ եւ մոլի է , նոքա անմիջապէս քրիստոնէութեան կը վերագրեն այդ ամենը եւ կ'ասեն . « ա՞յդ է քո քրիստոնէութիւն » . եւ փոխանակ այդ քրիստոնեայէն բարի օրինակ տեսնելու մեր երկնային կրօնի ճշմարտութեան հաւատալու եւ դառնալու ի լոյս Աւետարանի , նորա յոռի ընթացքէն կը գայթակղին , եւ նոցա սիրտեր քրիստոնէութեան դէմ առաւել եւս կը կարծրանայ : կամ երբ օտարազգին հայու յոռի ընթացքը կը տեսնէ , նա ընդհանրապէս այդ ընթացք նորա կրօնական եւ ազգային սեփական ոգւոյն կը վերագրէ , եւ այսպէսով յաճախ կ'արատաւորուի մեր ազգութիւնն եւ Հայաստանեայց Եկեղեցի , որ պէտք է միշտ փայլի եւ լուսաւորէ իբրեւ « լոյս առաջի մարդկան , որպէս ղի տեսցեն զգործս մեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայրն մեր որ յերկինս է » :

### Ձ1 . ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական ընկերսիրութեան զգացումն ամենէն աւելի զօրաւոր կերպիւ յերեւան կը գայ ազգասիրութեան մէջ : Ազգն ընկերութեան ամբողջութիւնն է զոր քրիստոնեայն պարտի սիրել այնպիսի բազմապատիկ սիրով որքան բազում են այդ ազգի անհատք : Չէ՞ որ մեր Փրկիչն եւս կը յանձնարարէր իւր հրեայ աշակերտաց՝ իւրեանց սիրոյ նուէրներ մատուցանել նախ հայրենի ժողովրդեան եւ երթալ « առաւել առ ոչխարսն կորուսեալս

տանն Իսրայէլի :» Ապա ուրեմն մինչդեռ մենք մեր առանձին շահերու վերայ կըխորհինք, պարտինք այնպէս խորհիլ թէ ի՛նչպէս մեր անձնական շահեր ազգի եւ եկեղեցւոյ ընդհանուր շահուց համաձայնելու են : Մեր աշխարհային կոչում եւ զբաղում այնպէս ընտրելու ենք՝ որ համաձայնին ազգի եւ եկեղեցւոյ ընդհանուր շահուց :

Եկեղեցին, փոխադարձաբար, սիրոյ հետաքրքրութեամբ կըդիտէ՝ իւր ժողովրդեան նոյն իսկ աշխարհային յառաջագիմութիւնն, եւ կ'ազօթէ վասն առաւել յաջողութեան ՚ի նոյն : Քանզի որքան որ իւր նպատակ հոգեւոր է, դարձեալ նա չէ կարող անտես առնել այն իրողութիւն, որ նոյն իսկ այդ հոգեւոր յառաջագիմութեան մեծապէս կըծառայէ «Մամոնայն անիրաւութեան» զոր Տէրն մեր կըյանձնարարէ իսկ ասելով՝ «Արարէք ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութեան» : Եթէ Քրիստոսի ժամանակ այս այսպէս էր, ուրեմն ո՞րքան առաւել մեր նիւթականացեալ դարու մէջ, երբ ամեն ինչ մամոնայի վերայ կըզառնայ : Սակայն քրիստոնէի համար տարբերութիւնը սա պէտք է լինի, որ մենք ոչ թէ պիտի մամոնային ծառայենք, — «Զի ոչ ոք կարէ Աստուծոյ եւ մամոնայի ծառայել» — այլ զմամոնայն պէտք է մեզ ծառայեցնեմք : Ուրեմն պէտք է մի այնպիսի աշխարհային կոչում ընտրել թէ մեզ եւ թէ մեր զաւակաց համար, որ մեր կրօնական եւ սզգային ամբողջութիւնը պահպանելուն որ եւ է իւրիք արգելք չըլինի, այլ ըստ կարելւոյն այդ ամբողջութիւնը առաւել եւս զօրացնելու եւ կեդրոնացնելու նպատէ :

Որքան որ ի բուն հայրենիս գտնուող ազգայնոց համար յարմարագոյն կըհամարուին երկրի մշակութիւն եւ այնպիսի զբաղումներ որ մի երկրի բնիկ ժողովրդեան կըվերաբերին, սակայն հայրենիքէն հեռացեալ եւ մանաւանդ եւրոպական երկրաց մէջ գտնուող դաղթական հայոց համար աւելին պատաւոր համարուած է յիւրաւի առեւտուրն, վասն զի առեւտուրի պարագուումն ուրիշ զբաղումներէ եւ պաշտօններէ աւելի կը պաշտպանէ ազգային եւ կրօնական միութեան ոգին օտարանալէ, կամ մի մեծ ազգի մէջ խառնուելով կորսուելէ : Ուրախալի է որ այս մասին մեր գաղթական հայեր ի սփիւռս աշխարհի շատ խրատի պէտք չունին, ամենէն նուազ Մանչէսթրի հայք . նոքա ընդհանրապէս իրենց բնական ձիւրքերուն կըճեփեին : Եւ եթէ երբէք իրենց կայ, այն եւս նոր սերունդի համար է :

Փորձուած իրողութիւն է որ երբ մի ծառ օտար հողի

վերայ կըփոխադրուի, նա կըջանայ ըստ կարի այդ օտար հողի եւ կլիմայի հանգամանաց համակերպիլ եւ այնպէս պողաբերել: Մեր ազգի նոր սերունդն եւս զաղթականութեան մէջ այս համակերպելու միտումն ունի: Հընդկաստանի հայեր, քանի որ առեւտուրով կը պարապէին, վերին աստիճանի ազգասէր եւ եկեղեցասէր ժողովուրդ մի էին. եկեղեցիք, տպարաններ, հայ լրագրութիւն (առաջին հայ լրագիրը Հնդկաց Մադրաս քաղաքի մէջ հրատարակեցաւ), երեւելի գրապէտներ, բազմաթիւ ընտիր եւ պիտանի հրատարակութիւնք եւայլն, մինչեւ իսկ հայրենեաց բնագաւառի համար մեծամեծ եւ յանդուգն բարիքներ կըխորհէին: Ս. Էջմիածնի, Ս. Երուսաղէմի որպէս եւ Միսիթարեան միաբանութեանց մեծամեծ նուէրներ տալով կըքաջալերէին յուսումն մանկուոյ ազգիս եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ: Այլ երբ հին սերունդն անցաւ, եւ Անգլիոյ եւ անգլիական զպրոցաց մէջ ուսում առած նոր սերունդն — որ ամեն ինչ սովորած էր բացի իւր մայրենի լեզուէն — յաջորդեց, եւ առեւտուրն անպատշաճ համարելով իւր ստացած անգլիական կըրթութեան. ձգեց այլ եւս իւր հայրենի զբաղում եւ ընդ նրմին իւր հայրենի սէր Եկեղեցւոյ եւ ազգի:

Մինչեւ ցայսօր Հնդկաստանի մէջ կըգտնուին հայազգի բարձրաստիճան պետական պաշտօնեայններ, երեւելի փաստաբաններ, բժիշկներ եւ այլ այսպիսիներ որ մեր ազգին մեծ պարծանք ու պատիւ կըբերին. բայց, աւա՛ղ, չոր ու ցամաք պարծանք, որ ազգի ներքին կենաց եւ նորա լրութեան համար որեւէ իրական օգուտ չունի: — Հնդկահայոց նման ուրիշ հայկական գաղթականութիւնք եւս իւրեանց ազգութեան եւ եկեղեցասիրութեան զգացում կորուսեր են գլխաւորաբար իւրեանց հայրենի սովորութեանց եւ բնատուր կոչման չը հետեւելու աղաքաւ: Լաւ է որ այսպիսի տխուր օրինակներ մեր առջեւ պահելով մեծ զգուշութեամբ կըթերնք մեր զաւակներ, եւ այլոց սխալներէն օգտակար եւ պիտանի խրատներ առնումք:

## 21. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԵՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Այսու ամենայնիւ չեմ ուզեր գիտութեանց եւ արուեստից այլեւայլ ճիւղերը դատապարտել. եւ եթէ վստահութիւն ունենայի որ մեր գաղթական ժողովրդեան զաւա-

կունք մայրենի լեզուի եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վերարեբեալ գիտելեաց հիմունքն ի մանկութենէ պիտի դնեն, այնպէս որ ապագային այլ եւս որեւէ վտանգի դուռ բաց չը մնայ, կըյանձնարարէի, մինչեւ իսկ նախամեծար կըհամարէի, արուեստից եւ գիտութեանց ճիւղերը քան զգործնական վաճառականութիւն: Այլ որովհետեւ գիտեմ որ եթէ փայլին այդ ճիւղերու մէջ, յօգուտ օտարաց եւ առաջի օտարաց պիտի փայլին, քանի որ իւրեանց մտաւոր զարգացման եւ առաւելութեան հետ մէկտեղ իւրեանց հայրենի ժողովրդեան եւ ազգի օգտակար լինելու յատկութիւններէն զուրկ են, եւ շատ հաւանական չէ որ նոքա ձեռնարկեն կամ յաջողութեամբ սովորին ինչ որ մանկութեան տիող մէջ պիտի սորված լինէին:

Սակայն ինչդիրը կըտարբերի այն երիտասարդաց համար որք յեւրոպա ծնած չեն, այլ իւրեանց հայրենեաց մէջ ազգային կրթութեան եւ ազգային կրօնասիրութեան հիմունքն արգէն դրած են: Այդպէսներու համար կ'ասեմ՝ մեղք է որ առեւտուրով ժամավաճառ լինին՝ եթէ այլապէս իւրեանց ապրուստ ապահովեալ է: Նոքա պէտք է բոլոր ուժով աշխատին հայ ազգին ներկայացնել կամ հայացնել այն մեծամեծ յառաջդիմութիւններ որոց վերայ հիմնեալ է Եւրոպոյ քաղաքակրթութիւն: Նոքա կոչուած են իննեւտասներորդ դարու մէջ նոյն գերըկատարել մեր ազգի համար ինչ որ հինգերորդ եւ վեցերորդ դարուց մէջ կատարեցին մեր երանաշնորհ թարգմանիչք:

Գրչի գործածութիւն որքան ազդեցիկ եւ զօրաւոր է տեղ աեղ, նոյնքան պատասխանատու պաշտօն մի է որ մեծ խոհեմութիւն որպէս եւ ազգասիրութիւն կըպահանջէ գործածողէն: Գրագէտն ամենէն յառաջ իւր ընթերցողաց պէտքերն եւ օգուտն պարտի խորհիլ, եւ ապա իւր անձնական հաճոյքն: Եւրոպական գրականութիւնը բաւականաչափ բարի որպէս եւ չար օրինակներ եւ ուղեցոյցներ դրած է մեր ուսումնական երիտասարդ գաղթականաց առջեւ: Մեծ իմաստութեամբ պէտք է փնտոեն բարին եւ զայն միայն ներկայացնեն իւրեանց ազգի եւ Եկեղեցւոյ համեմատաբար անմեղ մանկանց, եւ ամենայն զգուշութեամբ խորշին այն ամեն բաներէ որ ազգի ամբողջութեան եւ կրօնասիրութեան ոգւոյն որեւէ շնա կարէ պատճառել:

Այս էր մեր նախնի թարգմանչաց շաւիղն: Նոքա շատ

քիչ գրեցին, այլ այդ քիչն իւրեանց մարմնոյ եւ արեան չափ իրականութիւն ունէր. իւրաքանչիւր բառ նոցա սրտի խորերէն կը բղխէր եւ, աւելորդ է ասել, ընթերցողին եւս սրտի խորերը կը թափանցէր: Գրչով գործուած բարիքը, գէթ ներկայ դարու մէջ եւ ներկայ պարագայից ներքոյ, ամենէն աւելի ազդու եւ մնայուն բարեգործութիւնն է, եւ ընկերսիրութեան ամենամիտ արտայայտումն է, եթէ կարող ձեռքով եւ միանգամայն քրիստոնէական սիրոյ եւ եկեղեցական օրինաց համեմատ գործածուի: Իսկ նորա չարաչար գործածութիւն. ընդ հակառակն, նոյնքան աւելի վնասակար եւ ընկերսիրութեան օրէնքէ հեռու է, եւ հետեւաբար պախարակելի եւ խոտելի է, որքան նորա բարուք գործածութիւն գովելի եւ պատուոյ արժանի է:

Խօսքս ոչ թէ միայն վերացական կամ բանաստեղծական գրականութեան վերայ է, այլ առաւելապէս պիտանի արհեստից եւ գործնական գիտելեաց գրականութիւնն է, որում մեր ազգն այժմ կը կարօտի: Հողագործութիւն, մեքենագործութեան բազմաթիւ ճիւղերն, տարրաբանութիւն, բժշկութիւն եւ այլ այսպիսի առարկայից գիտութիւնն նախ հիմնապէս ձեռք բերել եւ ապա հազորգել մեր բազմակարօտ ազգին՝ տէրունական ընկերսիրութեան օրինաց աստուածահաճոյ կատարումն պիտի համարուի, եւ Ս. Եկեղեցւոյն եւս անուղղակի կերպիւ ծառայութիւն մատուցած կը լինի մք այնու:

Համատօտ լինելու բոլոր ջանքովս հանգերձ, թուղթս իմ ակնկալեալ սահմանէն անցաւ: Բայց յուսամ թէ կարողացայ փոքր ի շատէ յիշեցուցանել Սիրելի Ընթերցողացդ ինչ որ յաճախ եւ այլեւայլ կերպերով քարոզած եմ Ս. Եկեղեցւոյ բեմէն: Տացէ Տէր որ Երկնից Արքայութեան սերմերն, որոյ ամենայնեօրին մշակ կարգուած եմ, օրրատօրէ արմատանայ Եկեղեցւոյ մանկանց սրտերի մէջ, եւ առաքինութեան առատ ու քաղցրահամ պտուղներ բերէ ի փառս Ամենակալին եւ ի պարծանս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Որով Մեամ Հոգեւոր սիրով եւ օրհնութեամբ  
Սիրելեացդ իմոց ի Գրիսոս, Աղօթարար ծառայ  
Թ. ՔՀ. Տ. ԻՍԱՀԱԿՍՆ

Առ Դրան Ս. Հոգի Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւ

Հայոց, ի Մանչեսթր

ի Տոնի Համբարձման Տեառն 1899

